



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Աշխարհ իմ, քեզանից
Սի բան եմ հարցնելու.
Ճի՞շտ է, որ քեզ մի օր
Դրախտ եմ դարձնելու:**

ՀԱՍՈՒՄ

ՈՒՐԲԱԹ, 9 ՀԵԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 40 (416)

Վեց տարի առաջ՝ 2010-ի հոկտեմբերին, «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակում գործարկվեց «Տաթևեր» ճոպանուղին, որ ռեկորդային էր ոչ միայն երկարությամբ (5752 մետր), այլ նաև կառուցման ժամկետով՝ տասը ամիս: 2008-ին տարբեր ազգության եւ կրոնական պատկանելության մարդիկ միավորվեցին Տաթևի վանական համալիրի վերածնունդի գաղափարի շուրջ՝ մոսկվայաբնակ գործարար Ռուբեն Վարդանյանի եւ նրա տիկնոջ՝ Վերոնիկա Չոնաբենդի գլխավորած հիմնադրամի շրջանակում: 28 մլն դոլարի նվիրատվություն կատարած Ռուբեն Վարդանյանին հաջողվել էր իր գաղափարով ոգեւորել մոտ 100 հայ եւ օտարերկրացի բարերարների: «Տաթևի վերածնունդ» ծրագրի «Գործունեության հաշվետվություն» տեղեկատուից իմանում ենք, որ ծրագրի դոնոր հանդես է եկել տարբեր ազգությունների եւ դավանանքի 146 անձ՝ աշխարհի 18 երկրից, ում հիմնադրամի հիմնադիրները հայտնել են իրենց երախտագիտությունը: Նրանց աջակցությամբ կառուցվել է ճոպանուղին, կառավարության հատկացրած միջոցներով վերականգնվել վանք տանող ճանապարհը, բարեկարգվել շրջակայքը, կառուցվել ճոպանուղու «Հալիձոր» եւ «Տաթև» կայանները, այժմ էլ Տաթևի վանական համալիրում վերականգնման աշխատանքներ են կատարվում (Սուրբ Աստվածածին եկեղեցին է վերականգնվում):



«Տաթևեր» ճոպանուղին շունչ է փսփս փարածաշրջանի գյուղերին

ման գծով ղեկավար: Երկու տարի է՝ ղեկավարում է «Տաթևեր» ճոպանուղին: Ո՞րն էր ճոպանուղու կառուցման գաղափարը, չէ՞ որ այն թանկարժեք ինժեներատեխնիկական կառույց է եւ նույնքան թանկ հաճույք Հայաստանի ման նվազ հնարավորություններ ունեցող երկրի համար: Բարերար եւ գործարար Ռուբեն Վարդանյանը որոշեց ճոպանուղի կառուցել, որ կգար գացներ տուրիզմը եւ կօգներ տեղաբնակներին ավելի ոյուրին տեղաշարժվել: «Եթե մինչև ճոպանուղի կառուցվել Գորիս-Երեւան մայրուղու մեկ ժամ էր պահանջվում Տաթևի համալիր հասնելը, ապա այժմ կես ժամ է տևում

ճոպանուղի նստելը եւ Տաթևի հասնելը», – մանրամասնում է մեր զրուցակիցը: Նաև տեղեկացնում է, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի շրջանակում Տաթևում եւ հարակից համայնքներում զբոսաշրջային ենթակառուցվածքի զարգացմանը միտված քայլեր են ձեռնարկվում, միջոցներ են ներդրվում (այդ թվում՝ ճոպանուղու տոմսերի վաճառքի հասույթը) վանական համալիրի վերականգնման նպատակով: Հիմնադրամի մի ուղղվածությունը Տաթևի վանքին հարակից համայնքների սոցիալ-

էջ 3

Մեծ ճակատամարտից առաջ. հեփադարձ հայացք

2017թ. խորհրդարանական ընտրության նախապատրաստությունը, կարծեք, ակտիվ փուլ է թեւակոխում: Ամենակարեւոր՝ հանրության գերակշռող մասն աստիճանաբար գիտակցում է, որ ապրիլին ընտրվելիք Ազգային ժողովն է լինելու երկրի բարձրագույն իշխանության իրական կրողը: Ասել է թե՛ ապրիլյան ընտրությունը փաստորեն իր մեջ մեկտեղում է ե՛ւ ԱԺ-ի, ե՛ւ ՀՀ նախագահի ընտրությունները:

Թե այդ առիթով ինչ գործընթացներ են տեղի ունենում Սյունիքում, եւ ուժերի ինչպիսի դասավորություն է ուրվագծվում՝ կներկայացնենք պարբերաբար: Այդ ամենից առաջ, սակայն, կուզենայինք մեկ անգամ եւս վերհիշել ՀՀ նախագահի եւ Ազգային ժողովի վերջին ընտրությունների

արդյունքները Սյունիքում, որոնք ընդհանուր եւ նախնական պատկերացում կտան քաղաքական ուժերի հնարավորությունների հարաբերակցության մասին: Աժ վերջին ընտրությունը տեղի ունեցավ 2012թ. մայիսի 6-ին: Սյունիքում քվեարկության մասնակցածների մոտ 60 տոկոսն արտահայտվեց հօգուտ ՀՀԿ-ի: Ի դեպ, Սյունիքում էր քվեարկում մոտ 20 հազար զինվորական: Մինչդեռ Կապանի եւ Սիսիանի տարածաշրջաններում ՀՀԿ-ն (համամասնական ընտրակարգով) հավաքեց 50 տոկոսից պակաս ձայն: Սիսիան քաղաքի յոթ տեղամասից վեցում եւ տարածաշրջանի մի քանի գյուղում ՀՀԿ-ն ուղղակի պարտություն կրեց: Սիսիան քաղաքում իշխանության թեկնածուն մեծամասնական ընտրակարգով ստա-



գավ վավեր ձայների 14,4 տոկոսը: Նման նվաստացուցիչ արդյունք ՀՀԿ-ի թեկնածուն Հայաստանի ոչ մի ընտրատարածքում չէր ունեցել: Մայիսի 6-ի ընտրություններում Սյունիքում քվեարկությանը մասնակցածների 22 տոկոսը (մոտ 19 հազար ընտրող) ձայն տվեց ՀՀԿ-ին, ինչը մոտ երեք անգամ ավելի էր, քան 2007-ի Աժ համամասնական ընտրություններում: Կուսակցության հաջողությունն ակնհայտ էր

էջ 2

Սյունիքի հանքարդյունաբերական ձեռնարկություններում ոչ սովորական ժամանակներ են

Հանրապետության առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի մեծությունների մասին պաշտոնական տեղեկագիրը՝ եռամսյակը մեկ անգամ հրապարակվող, մեծ հետաքրքրության է սովորաբար արժանանում Սյունիքում: Եվ դա այն պատճառով, որ դրանում ավանդաբար արտացոլվում է մարզի երեք հանքարդյունաբերական ընկերության վիճակը: Իսկ լեռնահանքային արդյունաբերությունը մարզի տնտեսության մեջ ներկայումս զբաղեցնում է 66,4 տոկոս, մարզի արդյունաբերության մեջ՝ 81,9 տոկոս:

2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսների աշխատանքի արդյունքում «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը խոշոր հարկատուների ցուցակում զբաղեցնում է 17-րդ հորիզոնականը՝ զիջելով տարիներ շարունակ զբաղեցրած 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ տեղերը: Ինը ամսում այդ ընկերության կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը կազմել է մոտ 5,2 մլրդ դրամ, որը գրեթե հինգ անգամ պակաս է 2013-ի նույն ժամանակաշրջանի ցուցանիշից (26,3 մլրդ դրամ), մոտ 3,5 անգամ ցածր՝ 2015-ի համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ:

Կապանի լեռնահարստացման կոմբինատը ընթացիկ տարվա ինը ամսում պետական բյուջե է վճարել մոտ 1,8 մլրդ դրամ (հարկերի ընդհանուր գումարը): Մեկ տարի առաջ այդ ցուցանիշը 2,3 մլրդ դրամ էր, 2014-ին՝ 4,1 մլրդ:

«Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը 2016թ. ինը ամսում պետական բյուջե է վճարել 1,1 մլրդ դրամ (հարկերի ընդհանուր գումարը): Այդ թիվը զիջում է նախորդ տարիների համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշներին. 2015-ին՝ 2,2 մլրդ դրամ, 2014-ին՝ 2,3 մլրդ, 2013-ին՝ 2,5 մլրդ:

Իհարկե, լեռնահանքային արդյունաբերության վիճակի մասին կարելի է պատկերացում կազմել այլ ցուցանիշներով եւս, բայց բավարարվենք վերոնշյալ տեղեկություններով:

Նման հետընթացի գլխավոր պատճառը, անշուշտ, գումարի մետաղների միջազգային շուկայում գների անմասնադեպ անկումն է: Դրության մասին շատ թե քիչ պատկերացում կազմելու համար ասենք, որ մեկ տ մոլիբդենի գինը 2012 թվականի մոտ 33 հազարից հասել է 15250 դոլարի (2016թ. նոյեմբերի 17-ի դրությամբ): Որոշ կայունացում էր նկատվել 2014-ին, բայց կրկին՝ հետընթաց:

Մեկ տոննա պղնձի գինը ս.թ. նոյեմբերի 17-ի դրությամբ 5459 դոլար էր, այս տարեկազմի՝ 4468 դոլար: Մինչդեռ 2012 թվականին մեկ տոննա պղնձն արժեք 8296 դոլար:

էջ 2

Կմարվի աշխատանքային ցորենի սերմացուի համար մարզի գյուղական համայնքներում կուտակված 2012թ. պարտքը

ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Յակոբյանը համայնքապետարանների ներկայացուցիչների հետ քննարկել է պետական աջակցության ծրագրով մարզին հատկացված աշխատանքային ցորենի սերմացուի դիմաց վճարման կուտակված պարտքերի հետ կապված հարցեր: Քննարկմանը որոշում է կայացվել աջակցել գյուղական համայնքներին եւ մինչեւ 2016 թվականի վերջը մարտի 2012թ. պարտքը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին:



Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 2012թ. համապատասխան որոշմամբ շուկայականից էժան գներով Սյունիքի մարզին հատկացվել է 780 տոննա աշխատանքային ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 124 միլիոն 800 հազար դրամ ընդհանուր գումարի չափով: Տրամադրված սերմացուի դիմաց վճարումների հետագա հավաքագրումը դժվարացրել են անբարենպաստ եղանակային պայմանները, ինչի պատճառով մարզի 21 համայնք դեռևս պարտք է պետությանը: Մարզպետ Վահե Յակոբյանը, անդրադառնալով 2013 թվականին աշխատանքային ցորենի դիմաց սերմացուի վճարման կուտակված պարտքին, նշել է, որ մարզպետարանը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի այն մարզի 2017թ. ընթացքում:

29.11.2016
syunik.mtad.am

Մեծ ճակատամարտից առաջ. հեղադարձ հայացք

հատկապես Կապանում եւ Սիսիանում: Անակնկալ էր ՀՀ-ի հանդեպ վստահության կրկնակի ցրվումը. 2007-ին մարզում 9243 ձայն ստացած ՀՀ-ը 2012թ. մայիսի 6-ին ստացավ 4442 ձայն: Եվ դա այն դեպքում, երբ այդ կուսակցությունը ներկայացրել էր ամենամարտնչական խախտողական ծրագիրը, երբ այդ կուսակցությունը իրականացրեց անենագրագետ քարոզարշավը:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Սյունիքում 2013թ. փետրվարի 18-ին՝ ՀՀ նախագահի ընտրության ժամանակ: Քվեարկության մասնակիցների 65, 10 տոկոսը (45734 ընտրող) վստահեց Սերժ Սարգսյանին, 31,85 տոկոսը (22387 ընտրող)՝ Րաֆֆի Հովհաննիսյանին: Բայց Սյունիքում արձանագրվեց այդ օրերի համար արտառոտություն: Կապան քաղաքը, փաստորեն, վստահության քվե տվեց Րաֆֆի Հովհաննիսյանին (9375 հոգի, որ կազմում է քվեարկությանը մասնակցածների 54,3 տոկոսը): Սերժ Սարգսյանի օգտին քվեարկեց 7274 հոգի (42,1 տոկոս):

Սյունիքյան րոժերի դասավորության եւ հարաբերակցության, ինչպես եւ նախընտրական միտումների մասին մեր պատկերացումն ավելի օբյեկտիվ ու ամբողջական կլինի, եթե վերհիշենք նաեւ 2016թ. սեպտեմբերի 18-ի եւ հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքները, որոնց նույնպես կանոնադաշտում:

ՍՍՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՕԵԿ-ը Սյունիքում պահպանեց դիրքերը, որ ունեցել էր 2007-ին: Այն ժամանակ՝ 2805 ձայն, 2012-ի մայիսի 6-ին՝ 2862 ձայն: Այդ կուսակցությունը համեմատաբար կենսունակ գտնվեց Կապանում եւ Սիսիանում: Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների հոծ շարքերը, որ նկատելի էին 2007-08-ին Սեդրիում, Կապանում, Գորիսում, Սիսիանում, այլևս չկային: Մեծամասնական ընտրապայքարում, հատկապես N37 ընտրատարածքում, կուսակցություններից, գաղափարախոսություններից, ծրագրերից, անգամ ընտրակաշառքից վեր տեղայնական մտածելակերպն էր, տեղային հայրենասիրու-

թյունը, թայֆան: N38 ընտրատարածքում էլ որոշիչն այլ գործոններ էին: Պատահական չէ, որ Վահե Յակոբյանի օգտին քվեարկած հազարավոր ընտրողներ չէին քվեարկել ՀՀ-ի օգտին: Մոտ 3500 հոգի էլ (Գ.Գեւորգյանի օգտին քվեարկած 8034 հոգուց) քվեարկեց ՀՀ-ի համամասնական ցուցակի օգտին: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Սյունիքում 2013թ. փետրվարի 18-ին՝ ՀՀ նախագահի ընտրության ժամանակ: Քվեարկության մասնակիցների 65, 10 տոկոսը (45734 ընտրող) վստահեց Սերժ Սարգսյանին, 31,85 տոկոսը (22387 ընտրող)՝ Րաֆֆի Հովհաննիսյանին: Բայց Սյունիքում արձանագրվեց այդ օրերի համար արտառոտություն: Կապան քաղաքը, փաստորեն, վստահության քվե տվեց Րաֆֆի Հովհաննիսյանին (9375 հոգի, որ կազմում է քվեարկությանը մասնակցածների 54,3 տոկոսը): Սերժ Սարգսյանի օգտին քվեարկեց 7274 հոգի (42,1 տոկոս):

Սյունիքյան րոժերի դասավորության եւ հարաբերակցության, ինչպես եւ նախընտրական միտումների մասին մեր պատկերացումն ավելի օբյեկտիվ ու ամբողջական կլինի, եթե վերհիշենք նաեւ 2016թ. սեպտեմբերի 18-ի եւ հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքները, որոնց նույնպես կանոնադաշտում:

Սյունիքի հանքարդյունաբերական ձեռնարկություններում ոչ սովորական ժամանակներ են

Եղ 1 Վերջին ամսում նկատվում է պղնձի գնի դանդաղ աճ:

Սեզանում արձանագրված հետընթացը, անտարակույս, նաեւ սուբյեկտիվ պատճառներ ունի, բայց դրանք այս դեպքում երկրորդական նշանակություն ունեն, եւ նպատակահարմար չենք գտնում դրանց շուրջ հիմա քննարկում ծավալել: Մարզի հանքարդյունաբերական երեք խոշոր ձեռնարկությունում առկա աշխատատեղերի պահպանումը եւ սոցիալական առաջնահերթ ծրագրերի կատարումը, կարծում ենք, իրավիճակից

բխող առաջնահերթ խնդիրն են ներկա փուլում:

Իսկ թե ինչ զարգացումներ կարձանագրվեն մետաղների լոնդոնյան բորսայում՝ դժվար է գուշակել: Մի բան կարելի է ստույգ ասել՝ մետաղների շուկայում տիրող ոչ բարենպաստ վիճակը համաշխարհային տնտեսությանը պատասխանաբար ճգնաժամի դրսևորումներից է: Եվ համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից կախված կլինեն մետաղների բորսայում ամեն օր արձանագրվող ցուցանիշները: Տեսնենք...

ՍՍՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երեք անչափահաս կասկածվում է կեղծ փողեր պատրաստելու եւ իրացնելու մեջ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ կեղծ փողեր պատրաստելու, պահելու եւ իրացնելու դեպքի առթիվ. կասկածյալներն անչափահասներ են:

կան գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, խանութը շահագործող անհատ ձեռներեցը ճանաչվել է տուժող:

Քրեական գործի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, կատարվել են բնակարանների խուզարկություններ, որոնց արդյունքում հայտնաբերվել է տպիչ սարքը, որն, ըստ քննության տվյալների, օգտագործվել է կեղծ փողեր պատրաստելու համար, տպագրական թղթեր, ինչպես նաեւ համակարգիչների պրոցեսորներ: Առգրավվել են զենվել են խանութի տեսահսկման համակարգի տեսագրությունները եւ կեղծ թղթադրամը:

Նախնական քննության տվյալներով՝ 2016թ. նոյեմբերին Սյունիքի մարզի երեք անչափահաս բնակիչներ՝ 1999 եւ 2000թթ. ծնված, տպիչով կրկնօրինակելու եղանակով պատրաստել է 20.000 ՀՀ դրամ անվանական արժեքով թղթադրամ, որն իրացրել են նոյեմբերի 28-ին՝ Սյունիքի մարզի Լեռնաձոր գյուղի խանութում: Պատահիներից մեկը կեղծ թղթադրամով կատարել է գնումներ: 2016թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ ԲԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեա-

Անչափահասները ձերբակալվել են: Նախաքննությունը շարունակվում է, միջոցներ են ձեռնարկվում՝ դեպքի օբյեկտիվ, լրիվ եւ բազմակողմանի քննությունն ապահովելու ուղղությամբ:

Ծանուցում. Ենթադրյալ համացանցի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: **ՀՀ քննչական կոմիտեի 7 դեկտեմբերի 2016թ.**

Վաչագան Ադունցը 50 տարեկան է

Դեկտեմբերի 6-ին Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցը դարձավ 50 տարեկան:



Գորիս քաղաքի ու համայնքի մեջ մտնող գյուղական բնակավայրերի առջեւ ծառացած են բազմաթիվ հիմնախնդիրներ: Հենց դրանց աստիճանական լուծման գործում էլ ակնկալում ենք կոնկրետ եւ արդյունավետ քայլեր, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել Գորիսի երթը՝ միտված գալիքին: Ծնունդը շնորհավոր, հարգելի պարոն համայնքապետ: **«Սյունյաց երկիր»**

Ի գիտություն բաժանորդների
Ընթանում է «Սյունյաց երկիր» թերթի 2017թ. բաժանորդագրությունը:
Տարեկան բաժնեգինը **10,000** դրամ է:



«Տաթեւեր» ճոպանուղին շունչ է փսփս փարածաշրջանի գյուղերին

տնտեսական զարգացումն է, այլևս մշակութային կյանքի աշխուժացումը, նաեւ ավանդույթներն ու սովորույթները ներկայացնող հետաքրքրական միջոցառումների կազմակերպումը, որոնք կարող են տարածաշրջանն ավելի գրավիչ դարձնել այցելուների եւ զբոսաշրջիկների համար:



Վահե Բաղդասարյան

pelmayr/Garaventa» ընկերությունը: Ընդ որում՝ մեխանիկական կողմն ապահովել է շվեյցարական Garaventa, էլեկտրական մասը՝ ավստրիական Doppelmayr կազմակերպությունը: Կանխարգելիչ ի՞նչ աշխատանքներ են կատարվում: «Պրոֆիլակտիկական տարբեր բնույթ ունի՝ սկսած վագոնների դիրքի փոփոխությունից, որ կատարվում է ամսական մի անգամ, ճոպանները յուղվում են տարեկան մի անգամ, ամեն շաբաթ ստուգվում է յուղման համակարգը, իսկ շարժիչային սեղանակում ստուգվում է ամբողջ համակարգը՝ հիդրավլիկ, արգելակման: Մի խոսքով ամեն ինչ ստուգվում է՝ երեքշաբթի օրվանից ճոպանուղու վեց օր անխափան աշխատելու համար: Ծագած անսարքություններն օպերատիվորեն վերացվում են: Այնպիսի մասնագետներ ունենք, որ նույնիսկ շվեյցարացիներն են զարմացած նրանց պրոֆեսիոնալիզմից», - պատմում է Վահե Բաղդասարյանը:

Վահե Բաղդասարյանի փոխանցմանը՝ Մախիկում տարեկան մոտ 1500 մարդ էր այցելում Տաթեւի վանք, իսկ ճոպանուղին գործարկելուց հետո՝ վերջին երեք տարում, մոտ 100 հազար մարդ (տարեկան): «Որպես այդպիսին՝ Տաթեւը դարձել է տուրիզմի կենտրոն: Տուրիստական գործակալությունների ցանկում Տաթեւի վանական համալիրն ու «Տաթեւեր» ճոպանուղին միշտ տեղ են գրավում», - հավաստիացնում է նա:

Ապրիլյան պատերազմը սրբագրումներ մտցրեց շատ ուղորտներում: Մասնավորապես էլ շրջանառվում էր այն վարկածը, ըստ որի՝ պակասել են Յայաստան այցելող տուրիստները:

– Ապրիլից մինչև օգոստոս ուղեւորահոսքի կրճատում ունեցանք, ընդհանուր առմամբ՝ եթե Յայաստանում թիզներ են հիմնում, թիզներ-պլանի ռիսկերի մեջ պիտի նախատեսես այդ հանգամանքը, որ մենք պատերազմական իրավիճակում գտնվող երկիր ենք, մի փոքր ցնցումն ազդում է տուրիզմի վրա: Տուրիստն այսօր նայում է քարտեզին, որի վրա Ղարաբաղը Յայաստանին չափազանց մոտ է երևում, քարտեզի վրա այդ հեռավորությունը հավասարվում է գործի: Կարծում է, թե մարտի դաշտ է գալիս: Բայց իրականում մենք գիտենք, որ այդպես չէ: Ամեն դեպքում մոտ չորս տոկոսի անկում ունեցանք, համեմատած նյութ կրմանը: Կազմակերպությունների հետ, շատ մեծ չէ անկումը, եթե 20-30 տոկոս լինեն, մտահոգությունների տեղիք պիտի տար», - պարզաբանում է ճոպանուղու ղեկավարը:

«Երբ նոր էր կառուցվում ճոպանուղին, անընդհատ խոսվում էր անվտանգության, հուսալիության մասին, Չեր տնօրինման ժամանակ էքստրենալ վիճակներ եղել են», - հարցնում ենք:

– Զեն եղել է, եթե լինեին էլ, կարող էինք շատ արագ լուծել, որովհետև ճոպանուղու «տեխնիկական» թիմում ընդգրկված մասնագետները պատրաստ են, եթե պատահար լինի, օպերատիվորեն վերացնել անսարքությունը: Ծոպանուղին անվտանգ էլ հուսալի է, քանի որ ունի երկու կրող էլ մեկ քաշող ճոպան: 25 կամ 30 հոգին, որ նստելու են վագոնախցի մեջ, այն քաշը չունեն, որ մի բան պատահի: Երկրորդ՝ ամեն տարի Շվեյցարիայից մասնագետներ ենք հրավիրում (այն կազմակերպությունից, ով կառուցել է ճոպանուղին), որ պարբերաբար տեխնիկական զննում կատարեն: Եվ արգելակները, ել այն ամենը, ինչ ցանկով նախատեսված է, ստուգվում են փորձարկվում են:

«Տաթեւեր» հետադարձելի ճոպանուղին կառուցվել է «Տաթեւի վերածնունդ» ծրագրի շրջանակում եւ իրականացրել ճոպանուղիների կառուցման բնագավառում համաշխարհային ճանաչում ունեցող ավստրալիացի ճարտարապետ «Dop-

ը նուսանողների համար՝ տեղացի, թե արտերկրից ժամանած: Դպրոցականներին, եթե խմբով կամ դասարանով են գալիս, ուղեկցող են հատկացնում՝ վանական համալիրին եւ շրջակա միջավայրին ծանոթացնելու համար (մշակվել է 15 քայլարշավային երթուղի):

– Երբ տուրիզմի մասին խոսում են ամենաբարձր մակարդակով, անպայման ենթադրում ենք ենթակառուցվածքների զարգացում (հյուրանոցային տնտեսություն, սպասարկման օբյեկտներ եւ այլն), ձեր ունեցած տեղեկություններով Տաթեւից մինչև Գորիս ի՞նչ անդրադարձ ունեցավ ճոպանուղու կառուցումը տարածաշրջանի ենթակառուցվածքների զարգացման վրա, - սա եւս խնդրոտ առարկային առնչվող հրատապ հարցերից է:

– Ծոպանուղու բացվելուց առաջ Տաթեւ գյուղում կար գիշերակացի եւ առավոտյան նախաճաշի նվազ հնարավորություն, ճոպանուղու բացվելուց հետո շատացավ հյուրատների քանակը, մենք ծրագրի իրականացումը, հյուրատները, որոնք մասնակցեցին ծրագրին, ստացան շատ ցածր տոկոսով վարկավորում եւ այսպես սասած՝ հարմարավետ պայմաններ ստեղծվեցին, որ տուրիստը զա գիշերի, առավոտյան նախաճաշի եւ անցնի իր գործերին: Ծոպանուղուն հարակից ավտոկանգառում տեղեկատվական վահանակ է տեղադրված, որում նշված է հյուրատներն են, որ մասնակցել են ծրագրին, հյուրատներում կան ինտերնետ-կաբ, նորմալ սանիտարացի: Մշտապես տարբեր փորձագետներ ենք բերում, համագործակցում ենք միջազգային կազմակերպությունների հետ, տարբեր ոլորտի զարգացման համար, ղեկտեմբերին, օրինակ, Հոլանդիայից ճոպանուղու մասնագետներ, որ զարգացնեն ձիավարությունը Տաթեւ համայնքում:

Դժվարություններին վերաբերող հարցերի թվում մեր գրուցակիցը նշեց ճոպանուղու՝ մայրաքաղաքից հեռու լինելը, ինչը դժվարություններ է հարուցում վանական համալիրով հետաքրքրվողների եւ ճոպանուղուց օգտվողների համար, մանավանդ ձմռան ամիսներին:

«Եթե մի աշխատակիցներին պատեի առիթ ընծեռվեց օգտվելու Գինեսի եկեղծների գրքում գրանցված աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղու ծառայությունից, թե՛նայլից բարձրությունից հիանալու սյունիքյան բնաշխարհի գեղեցկությունը: Օդային ուղին անցնում էր Որոտանի գեղատեսիլ կիրճի վրայով, որանից գետ՝ մոտ 12 րոպե տեւող թռիչքի ընթացքում վագոնախցիկում երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն տեղեկատվություն էր հնչում պատմաճարտարապետական այն հուշարձանների վերաբերյալ, որ գտնվում էին ճոպանուղու ճանապարհին:

«Տաթեւ» կայանում հանդիպեցինք տուրիզմի զարգացման մասնագետ Հայկ Մելքոնյանին եւ Տաթեւի վանական համալիրի վերականգնողական աշխատանքները հսկող Սանահին Մանասյանին, ովքեր պատասխանեցին «Այունյաց երկիր» հարցերին իրենց ղեկավարած ոլորտների վերաբերյալ:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

3.4. Երբ նյութը պատրաստ էր տպագրության, ճոպանուղու ղեկավարից տեղեկացանք, որ Տաթեւ է ժամանել «Garaventa» ընկերության երկու մասնագետ, սպասվում է «Doppelmayr» ընկերության մի տարեկան այցը՝ տարեկան տեխնիկական զննում անցկացնելու համար: Նաեւ նպատակ կա մոդեռնացնել վագոնները, որ 25-ի փոխարեն տեղավորեն 30 մարդ:

Կլինեն նաեւ ձիով արշավներ

Դեռես 2011-ի հունիսին հանրապետության կառավարությունը որոշում էր կայացրել Գորիսում զբոսաշրջության զարգացման մասին՝ Գորիս քաղաքը հայտարարելով զբոսաշրջային կենտրոն: Դրանից ամիսներ առաջ գործարկվել էր «Տաթեւեր» ճոպանուղին, որը միտված էր Տաթեւի վանական համալիրը եւ նրա շրջակա համայնքները վերածել գրավիչ զբոսաշրջային ուղղության: Թե նախանշվածը որքանով է իրականություն դարձել, փորձեցինք իմանալ տուրիզմի զարգացման մասնագետ Հայկ Մելքոնյանից:

«Յայաստանի զարգացման նախագծեր» (IDEA) հիմնադրամում էր աշխատում, որտեղից տեղափոխվել է «Տաթեւեր» ճոպանուղի՝ որպես տուրիզմի զարգացման մասնագետ: Երեք տարի է՝ Այունիքում է, արմատներով Կապանի Շիկահող գյուղից է: Որոտանի կիրճում եւ հարակից տարածքներում նրա մշակած 15 երթուղի է գործում՝ Տաթեւ-Հարժիս, Տաթեւ-Բարձրավան, Լժեն-Տաթեւ-Բարձրավան, երթուղիներ կան, որոնք լքված գյուղերով են անցնում: Ինքն է ուղեկցում տուրիստներին, «Քանի որ չկան մարդիկ, ովքեր մի քանի լեզու իմանան, ներկայացնեն մեր բնաշխարհը, ապահովեն խմբի անվտանգությունը», - մանրամասնում է:

«Եթե մի քանի օր են տեւում, այդ դեպքում գիշերելու խնդիր չի՞ ծագում», - հարցնում ենք:

«Ամեն ինչով ապահովված ենք՝ վրան, բնապարկ եւ այլն: Բայց տուրիստներ կան, ովքեր ուզում են գյուղական տան մեջ ապրել, շփվել գյուղական կենցաղի, գյուղաբնակ մարդկանց հետ: Այդ տարբերակն են ընտրում: Յայաստան այցելած մարդկանց համար հետաքրքիր են ոչ միայն պատմաճարտարապետական հուշարձանները՝ եկեղեցիները, վանքերը, հիմնավորը կամուրջները, վաչքարերը եւ այլն, ոչ միայն բնությունը, այլև մարդկանց հետ շփվելը: Դա շատ կարեւոր հանգամանք է», - պատասխանում է:

Հետիտոն երթուղիներից գատ չկա՞ն ձիով արշավներ: Հայկ Մելքոնյանը տեղեկացնում է, որ նախատեսում են ձիով արշավներ, փետրվարի սկզբին Հոլանդիայից մասնագետներ են գալու, տեղացիներին սովորեցնեն, թե ինչպես կազմակերպել այդ գործը: «Ձիեր չենք օգտագործում, որովհետև չունենք վարժեցված ձիերի ֆոնդ: Գյուղական ձիեր կան, բայց վարժեցված չեն, մեծ ներդրումներ են անհրաժեշտ, որ ձիանոց կառուցվի, մասնագետ լինի, որ ձիերին խնամի, վարժեցնի»:

– Տուրիստներին, այնուամենայնիվ, հրապարակում է Այունյաց բնաշխարհը, - սա հարց էր, որ մեր գրուցակի առանցքն է:

– Աճը շոշափելի է, բայց ապրիլյան պատերազմի պատճառով տուրիստական շատ խմբեր հրաժարվեցին Յայաստան գալ, մասնավորապես Ռուսաստանից: Բայց քիչ չեն դեպքերը, երբ մարդիկ գալիս են, վերադառնում իրենց երկիրը, նրանց պատմածով ուրիշներն են գալիս: Տարեկան 300-400 հոգի գալիս է: Խնդիրն այն է, որ եւ ընդամենը մեր-

կայացուցիչ են: Եթե տուրիստական ֆիրմա ունենայի, կոնկրետ դրամով կզբաղվեի: Ակնկալում են այցելուների ավելի մեծ թիվ, քանի գիտեն, Ավստրիայում, Գերմանիայում, Ռուսաստանում քայլարշավի սիրահարներ, ակտիվ տուրիզմի ջատագովներ կան, ուղղակի Յայաստանի տեղը չգիտեն: Դա է ամենամեծ խնդիրը:

Ասում են՝ գովազդն առեւտրի շարժիչ ուժն է: Նույնքան այս ձեւակերպումը տուրիզմին է վերաբերում: Մեր գրուցակցի հանոգմամբ՝ գովազդը պիտի պետականորեն կատարվի: «Մենք փորձում ենք անհատների միջոցով այդ հարցը լուծել, գովազդել: Բոյոսելում Արցախի մասին մեծ ցուցահանդես էր կազմակերպվել: Համոզված են՝ դրական արդյունքներ է տալու: Իսկ Յայաստանը, չգիտեն ինչու, նման բան չի կազմակերպում: Այդ հարցով մի քանի հոգու դիմել են, ոչ մի պատասխան: Մենք ունենք վեր-կայք: Բայց դա քիչ է: այն մարդիկ, ովքեր գալիս են Յայաստան, այդ ամենը տեսնելուց հետո ասում են՝ չգիտեմք, որ այսպիսի երկիր կա: Շատ անգամ իրենց շրջագայությունն այսպես են նախատեսում. տասը օր՝ Վրաստանում, երկու օր



Հայկ Մելքոնյան

Յայաստանում շրջագայելու համար: Տեսնենք՝ այդ ի՞նչ երկիր է: Հետո այստեղ գտնվելիս զղջում են՝ օրերն ինչու՞ այդպես բաշխեցինք»:

Հ.Մելքոնյանի փոխանցմամբ՝ զբոսաշրջիկներն անպատրաստ են գալիս Յայաստան: Ինչ-որ մի տուրիստական ֆիրմա է բերում Յայաստան, Տաթեւի վանքում մոմեր են վառում, եւ դրանով ավարտվում է շրջագայությունը: «Մեր նպատակն այն է, որ մարդկանց թողնենք մեր շրջանում: Որ գիշերակաց լինի, հյուրատների տեղերը փող աշխատեն, փոքր հյուրանոցներն աշխատեն: Եթե տուրիստը եկավ, տեսավ, հաց կերավ եւ մեկնեց, ոչ մի օգուտ չի լինի»:

Ձրույցի ավարտին Հ.Մելքոնյանից ցանկացանք իմանալ, թե ինչ կուզենար փոխանցել մեր թերթի ընթերցողներին, ընդհանրապես սյունիցներին:

– Կինդրեի բնությունը մարդու պահել: Ցավում են, որ մեր երկրացիներից շատերը հեռու են կենցաղավարության տարրական կուլտուրայից: Բնության գրկում մի կտոր հաց են ուտում եւ իրենց հետեւից աղբի բլուր թողնում: Ցավոք, դա տարածված երեւոյթ է, որ ընդհանրապես չպիտի լինեն, քանզի մեզ մոտ տուրիստներ են գալիս տարբեր երկրներից: Իսկ այդ աղբի կույտերի լուսանկարները վաղ թե ուշ հայտնվելու են համացանցում, ընկնելու են մեր բջճամու ձեռքը: Դա մեզ վարկաբեկելու ամենակարճ ճանապարհն է: Բայց չէ՞ որ մենք անկրկնելի բնաշխարհ ունենք, մի լեռնաշխարհ, որի հետ գերագույն հաճույթ է շփվելը: Իսկ ճոպանուղուց օգտվելը, երկնային ուղիով երթելուց մի առանձին հատման է, կարող են տրամադրել իմ հեռախոսահամարը՝ 077 717 382, ցանկացողները նաեւ կարող են կապ հաստատել «Տաթեւեր» ճոպանուղու հետ:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Սիսիանի Ն.Ադոնցի անվան պատմության թանգարանում. վեց տարի առաջ եւ հիմա

ՀՀ մշակույթի նախարարության «Թանգարանային գիշեր» միջոցառումների ծրագրում առաջին անգամ Սյունիքի մարզից պաշտոնապես ընդգրկված էր Սիսիանի Նիկողայոս Ադոնցի անվան պատմության թանգարանը: 2010թ. մայիսի 15-ին Սիսիանում միջոցառումն ընթացել է «Մանուշակագույն հորիզոններ» կարգախոսով: Ըստ որում՝ Երեւան քաղաքի 28, Շիրակի մարզի (Գյումրի) 5, Լոռու մարզի (Վանաձոր) 4, Գեղարքունիքի (Գավառ) եւ Արարատի (գ. Ջանգալ) մարզերից մեկական թանգարաններ նույնպես ընդգրկվել էին նշված ծրագրում: Գաղափարը ներշնչված էր Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախածեռնած մշակույթների երկխոսության խորհրդով: Առանձնապես նկատելի էր ՀՀ մշակույթի այն օրերի նախարար Հասմիկ Պողոսյանի ակտիվ դերը: Միջոցառումը Սիսիանում ընթացել է գեղանկարիչներ ժիրայր Մարտիրոսյանի (Գորիս) եւ Սլավիկ Խաչատրյանի (Սիսիան) անհատական ցուցահանդեսներով: Միջոցառումը մասնակցում էին մեծ թվով երիտասարդներ, Բռնակոթի դպրոցի աշակերտներ եւ ուսուցչուհիներ: Թանգարանում գործում էր պատանի բարեկամի ակումբը: Այդ տարի ակտիվ էր Սիսիանի թիվ 4 դպրոցը: Ակումբի գործունեությունը այնպես է կազմակերպվել, որ բոլոր դպրոցները կապվել են թանգարանի հետ: Բռնակոթի դպրոցի աշակերտները հաղթել են «Հայ ասպետ» հանրապետական մրցույթում (պատմության ուսուցչուհի՝ Դոնառա Ասրյան):

Ուրախ ենք, որ «Հետքեր երկրի վրա» գիրքը, որտեղ ներկայացված է Նիկողայոս Ադոնցի անվան թանգարանը, հրատարակվում է թանգարանի հիմնադրման 25-ամյակի մեծառունով:

Արվեստի եւ սյունյաց մշակութային գանձերի, արժեքների ուշագրավ ներկայացմանը մասնակցել են մե-

ծաթիվ ուսանողներ եւ աշակերտներ: Նախապես թանգարանի բակում ծավալվել էր մոնումենտալություն, որի մեկնարկի լույսն Աստծո տաճարից՝ քարադարանի տարածքում հանրությանը մատուցել է հղի գեղեցկուհին՝ գեղանկարիչ Ջառա Գասպարյանը, ինչը խորհուրդ ունի:

Խորհրդանշական էր, որ միջոցառումը հրավիրված էին ոչ միայն Սիսիանի տարածաշրջանի, այլև Սյունյաց աշխարհի տարբեր քաղաքների մշակութային օջախներից ու կազմակերպություններից: Միջոցառումը մասնակցել է ելույթ են ունեցել Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղի քարտուղար, բանաստեղծ Արթուր Առաքելյանը (Գորիս), ՀՀ վաստակավոր արտիստ, Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, դերասան Կամո Արզումանյանը (Կապան), Հայաստանի նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ, գեղանկարիչ ժիրայր Մարտիրոսյանը (Գորիս) եւ ուրիշներ: Միջոցառումը վարում էին Սիսիանի Նիկողայոս Ադոնցի անվան պատմության թանգարանի վարիչ Ծովինար Պետրոսյանը, Սիսիանի քաղաքապետարանի կրթության եւ մշակույթի բաժնի այն ժամանակվա վարիչ Վարոս Սիմոնյանը, Սիսիանի քաղաքապետարանի նախկին աշխատակից, հեռուստալրագրող Սրբուհի Գրիգորյանը: Միջոցառումը մասնակցում էին եւ կլոր սեղանի շուրջ մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՀ ոստիկանության պետական պահպանության բաժնի Սիսիանի եւ Գորիսի ստորաբաժանումների ներկայացուցիչներ Արամ Եղյանը եւ Սամվել Հովհաննիսյանը՝ արվեստի գանձերի պահպանության հանդեպ մշտապես զգոն վերաբերմունք հանդես բերած անձինք:

Միջոցառման մասնակիցներն այնուհետեւ այցելել են կից գտնվող Հայաստանի ազգային պատկերաս-

րահի Սիսիանի մասնաճյուղի շենք (վարիչ՝ Անուշ Սուրադյան): Մշակութային այս օջախը, գտնվելով մայրաքաղաքից մեծ հեռավորության վրա, ունի արժեքավոր գեղանկարներ: Ուշագրավ էին Սիսիանից ուլունքազործ Արգիմե Սահակյանի, սիսիանաբնակ ստեղծագործողների թվում՝ գորիսեցի Արմինե Խաչատրյանի եւ այլոց աշխատանքները, որոնց մոտենալու եւ դիտելու համար հոծ բազմություն էր սպասում:

Միջոցառումն ավարտվեց, սակայն ծանրաբեռ տպավորություններ ստեղծեցին արվեստի եւ արհեստի այդ հոյակապ շքանշանների առթիվ, թեեւ 5-6 տարի է անցել այդ ժամանակվանից:

Թանգարանի մոտ են Նիկողայոս Ադոնցի արձանը (հեղինակ՝ Ա.Հովսեփյան) եւ մեծ բանաստեղծ ու փիլիսոփա Համո Սահյանի (հեղինակ՝ Գ.Բաղդասարյան) արձանը՝ Սիսիանի քաղաքապետարանից դեպի կամուրջ ձգվող ճեմուղու վրա: Քաղաքը շնչում էր բնության հետ ձուլված տեսողաշտի հեռավորության վրա՝ օրինակելի քաղաքաշինությանը:

Տպավորված են պատմության թանգարանում առկա հնաձեռն «հագար» գորգերով, քաղաքի կենտրոնին հարի շենքային հսկա դահլիճներով ու խնամված եղեմիներով, քարադարանով: Այստեղ են Սյունիքի մարզում պեղված, գիտական արշավների եւ այլ միջոցներով ձեռք բերված հնագիտական, ազգագրական մեծաքանակ ու բազմազան հավաքածուները, դրամական եզակի գանձերը, վավերագրերը, որ Հայաստանի հնագույն մշակութային ժառանգության կարելու մաս են կազմում: Ինչպես վկայում է ցուցահանդեսի պատմամշակութային պլան-կատալոգի ակնարկը՝ «Հնագիտական հետազոտություններով ի հայտ բերվեցին քրիստոնեությունից առաջ 6-1-ին հազարամյակների բազմաթիվ բնակատեղիներ եւ դամբարանադաշ-

տեր, հուշարձաններ: Հնուց ի վեր Սյունիքի մետաղագործ վարպետները տիրապետում էին բրոնզի, երկաթի, քանկարծեք մետաղների մշակման հմտություններին եւ տարատեսակ եղանակներին: Ժայռապատկերների, կավանդերի, մետաղյա նմուշների, կոթողների վրա դրոշմված պատկերազարդության մեջ գերիշխում են պաշտամունքային, ծիսահմայական նշանագրերը, դրանք սերտորեն առնչվել են նախնիների, տիեզերական պատկերացումների, արեւի, քրի եւ պտղաբերության գաղափարը խորհրդանշող հավատալիքների հետ»:

Թանգարանի բակում՝ Սիսիանի բնորոշ անկոչ գեփյուռի դեմ պայքարող՝ մոմի հուրը փրկող հղի կինը, նույնպես Քրիստոսից առաջ 12-11-րդ դարերի Տուրսի եղջերուի բրոնզե արձանիկը, որպես արեւի Աստծու սրբազան կենդանի խորհրդանշաններ, մարմնավորում են տարերքի ուժերը՝ ամպրոպը, կայծակը, ջուրը, որոնցով էլ պայմանավորված էին պտղաբերությունն ու կյանքը երկրի վրա:

Մշակույթի նվիրյալներին են նվիրում բանաստեղծությունների գրքեր: Հրաժեշտին սեղմում են թանգարանի մշտաբուն պահակների ձեռքերը: Ծնորակալ են տնօրենին ներկայացնում Հուշարձանների պահպանության հանրապետական գործակալության Սիսիանի տեսչության պետ Մելքոն Մարգարյանին:

Հրաժեշտ ենք տալիս Սիսիանի աշխարհի բռնակոթից դուրս Անուշ Սուրադյանին՝ պատկերասրահի անուշ հմայքի համար եւ Արցախի դուրս, թանգարանապաշտ գործիչ Ծովինար Պետրոսյանին, ով էպոսային ու Աստվածաշնչյան անուն-ազգանունը երկար տարիներ հետագծել-կապել է Սիսիանի, Սյունիքի եւ ազգիս հայրը:

* * *

Թանգարանի 25-ամյակին չուշացավ մեր 10-րդ այցը թանգարան, որի առթիվ ներկայացնում ենք թանգարանն ըստ Ծովինար Պետրոսյանի հեղինակած գրքի եւ «Կյանքին ու հավերժին՝ արժանի» Սիսիանի թանգարան. ընտրանի պատկերագրքի: «Թանգարանը կատարում է մեծ աշխատանք՝ նպաստելով պատմագիտական մտքի զարգացմանը տարածաշրջանում, օժանդակում Սիսիանում պարբերաբար աշխատող արշավախմբերին», ի պատիվ հայ մեծանուն պատմաբան, բյուզանդագետ, ծագումով բռնակոթի Նիկողայոս Ադոնցի:

Պատմության բազմաչափար դարաշրջանները Ծղուկի, Շաղատի, Աղիտուի, Սյունիի, Ռոտանի, Անգեղակոթի, Ռոտոնավանքի, Բռնակոթի, Լորի եւ շատ տեղանունների, պատմական դեպքերի եւ դեմքերի քուրաչով անցած ժամանակաշրջանի կնիքը կրող պատմամշակութային բացահայտումների վկա է Սիսիանում 1984թ. ձեւավորված 60 հուշարձանով Քարադարանը: Թանգարանի հիմնադիր Ծովինար Պետրոսյանը մշակութաբանի այսպիսի դրվածքով ներկայացավ եւ մասնագիտական մոտեցումով ստեղծեց Սյունիքի տարածաշրջանի՝ կասեի անենաուշագրավ՝ հուշարձանը՝ թանգարանը՝ 4600 քառ. մետր տարածքով, Սիսիան քաղաքի կենտրոնում:

ՀԿԿ շրջկոմի 1-ին քարտուղար Շշորս Դավթյանի՝ քարադարան ստեղծելու նախածեռնությունը, սիսիանցի գլխավոր ճարտարապետ Արեգ Ռաֆայելի Իսրայելյանի նախագծած քարադարանը եւ մուտքի դարպասները, ՀԿԿ Սիսիանի շրջկոմի հաջորդ 1-ին քարտուղար, պատմաբան Հենգել Առաքելյանի առաջարկով ստեղծված թանգարանն ու անվանակոչությունը պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցի անունով.

սրանք են փաստերը: Իրագործվեց՝ սկսած ժայռագրերից ու Ջորաքարերից մինչեւ Սյունի վանք ու նորոյա հուշարձաններ, ամբարեղու, պահպանելու, վաղնջական տարածքի պատմությունն աշխարհին ներկայացնելու նպատակը:

Ծովինար Պետրոսյանը «Սիսիանի պատմության թանգարան. կայացման տարիներ» (Ե., 2012, 60 էջ) գրքում՝ «Ինչ է 25 տարին թանգարանի կյանքում» խորագրի ներքո, գրել է: «Իմ ու գործընկերներիս կյանքում 25 տարին այն է, ինչը նվիրելով թանգարանի կայացմանը, հասանք մեր տարիքի 60-ի սահմանին: ...Կարողացանք թանգարան ստեղծել՝ բացարձակապես բաց տարածության մեջ, ոչնչանալուց փրկել կրվածքները համարվող Ջանգալը-Սյունիքի մշակութային գանձերի այն փշուրները, որոնք եւս անհետ կկորչեին, կզնային: Ասիանամները տարածքի թանգարանը նույնն է, ինչ պարսպի պատը: Թշնամու ոտքի կոխան Սիսիանի համար, որի ժողովրդի ստեղծածից միայն հողի տակ մնացածն է պահպանվել, կարելու է ամեն ինչ: Մշակութային ամեն արժեք տեղի պատմության համար նույնն է, ինչ սահմանին կառուցված պարսպին դրված ամեն քարը: Այդ պարսպը պետք է, որ մենք ապահով ապրենք, որ հայ մնանք: Այն ինքնատիպ կնիք է՝ դրված գոյատևման մեր ճանապարհին: Հազար խոնարհում նրանց, ովքեր գիտակցում են այս ամենը եւ սիրով օգնության ձեռք են մեկնում, նպաստում թանգարանի հարստացմանը, նրա միջոցառումների, ցուցադրությունների լիարժեք կազմակերպմանը:

Հազար սեր ու հարգանք նրան, ով բռնում է թանգարանի ճանապարհը՝ մտածելով, որ մշակույթն է սիրու ու խնամքով մշակող ունի»:

Ծովինար Պետրոսյանի հիշյալ գրքում «Այն, ինչ ժառանգել ենք, եւ այն, ինչ պիտի կտակենք...» ասվածը կապված է Սյունիքում պեղումներ իրականացնող հնագետ Օնիկ Խնկիկյանի կողմից հայտնաբերված իրերին, որոնք նա մանրամասն ներկայացրել է 2002թ. ԱՄՆ-ում անցկերկնով հրատարակված «Բրոնզե եւ երկաթ դարը Սյունիքում» գրքում:

Թանգարանն անձնագիր է, թանգարանը միայն հիշողությունն է: Թանգարանը ժողովրդական արվեստի ստեղծագործության, մշակույթների կենսագրության ժառանգական փոխանցողն է:

Սիսիանի թանգարանը զբաղեցնում է 510 քառ. մետր ցուցադրության տարածք, քարադարանը՝ 4600 քառ. մետր է քաղաքի կենտրոնում: Հիմնական ֆոնդի նյութը 2012-ին կազմել է 2080 միավոր (հնագիտական կենցաղի, գործվածքի իրեր, փաստաթղթեր եւ լուսանկարներ, քանդակ եւ գեղանկար): Հնագիտական հավաքածուն համարվում է անենախոշորը: Այն ունի 615 խեցեղ, ապակյա, բրոնզե, քարից պատրաստված իր: Իր բազմազանությամբ եւ ծավալով առաջին տեղում է կավից պատրաստված հավաքածուն (ծիսանդրեր եւ այլն): Սիսիանի թանգարանի հավաքածուի յուրաքանչյուր առարկա՝ լինի դա սնտեսական օգտագործման իր, զարդ, գեղեցկ կամ ծիսական առարկա, էապես զանազանվում է իր նյութի ինքնատիպությամբ, կատարման տեխնիկայով, զարդանախշով:

Մեծ թիվ են կազմում անձեռյա օգտագործման հեղուկ եւ սորուն մթերքների համար նախատեսված տարաները, զավթները, ճաշամանները, մատուցարան-քամիչները, կճուճները, ծաղկամանները:

«Ազգագրություն» բաժինը նորագույն ժամանակաշրջան է արտացոլում՝ սկսած 1600 թվականից մինչեւ մեր օրերը: Բաժինն ունի 1465

Նշվեց հաշմանդամության միջազգային օրը

Դեկտեմբերի 6-ին Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում տեղի ունեցավ հաշմանդամների միջազգային օրվան (նշվում է դեկտեմբերի 3-ին) նվիրված ցերեկույթ, որին մասնակցում էին Այունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը:

Ողջերթի խոսքով հանդես եկավ կրթահամալիրի տնօրեն Մարինե Ղազարյանը՝ նշելով, որ կրթահամալիրում սովորում է 101 սան, որոնցից յուրաքանչյուրի կրթությունն ու դաստիարակությունն իրականացվում են անհատական ուսուցման պլանով: Դրանք կազմվում են երեխաների կարիքներին համապատասխան, սովորողների մի մասն ընդգրկված է հատուկ արհեստագործական հոսքում, որտեղ յուրաքանչյուրն էլ կարգապահությամբ և խոհարարի օգնականի մասնագիտություններ:

Չնայած օրը տոնական էր, բայց նկատի ունենալով, որ ցերեկույթին

մասնակցում են մարզային եւ քաղաքային իշխանությունների ղեկավարները՝ տնօրենն իր խոսքում ներկայացրեց կրթահամալիրի առջեւ ծառայած հիմնախնդիրներից երկուսը: Կրթահամալիրում բնակվում է երկկողմանի ծնողազուրկ տասը շրջանավարտ, որոնց հետագա բնակվելու վայրը եւ զբաղմունքն անորոշ են: Նրանց ճակատագրի հստակեցումը հրատապ անհրաժեշտություն է: Այս ուստարվածից հետո կունենան նման կարգավիճակով եւս ութ շրջանավարտ: Սովորողների մեծամասնությունն ունի հեմաշարժական համակարգի զարգացման առնչվող խնդիրներ, սակայն կրթահամալիրը չունի նրանց կարիքներին հարմարեցված մարզադահլիճ, որը կծառայեր վերականգնողական թերապիայի արդյունավետ իրականացմանը:

– Մեր երեխաները հասարակության լիիրավ անդամներ են, եւ նրանցից յուրաքանչյուրն ասելիք ու անելիք ունի մեր երկրում, որին



սպասում ենք, – այսպիսի լավատեսական շեշտադրումով ավարտեց խոսքը տնօրենը: Կրթահամալիրի սաները հան-

հմտությունների զարգացում» թեմայով քառօրյա դասընթացը: Ծրագիրը նպատակ ուներ զարգացնել համապատասխան հմտություններ Այունիքի եւ հարակից չորս մարզերի 25 մասնակցի՝ 18-30 տարեկան հաշմանդամ եւ սոցիալապես անապահով երիտասարդների մեջ:

Սիսիան են ժամանել հինգ մարզի երիտասարդներ, ովքեր ունեն սեփական բիզնես հիմնելու հմտությունների պակաս: Երիտասարդները համատեղ փորձեցին դասընթացի օգնությամբ հասկանալ ձեռներեցության այն հմտությունները, որոնք կարելի է ձեռք բերել ոչ ֆորմալ կրթական մեթոդներով: «Ապագան մերն է-2» ծրագիրը միտված է Այունիքի, ԼՂՀ-ի, Կոտայքի, Շիրակի եւ Վայոց ձորի մարզերի սակավաշարժ երիտասարդության շրջանում խթանելու պրոակտիվ դիրքորոշումը սեփական ապագայի եւ համայնքի զարգացման հարցում:

Քառօրյա դասընթացի ընթացքում Սիսիան ժամանած հյուրերի առօրյան ավելի հետաքրքիր դարձնելու համար ամեն օր ընդունում էին նաեւ հյուրեր:

Առաջին օրը երիտասարդներին հյուրընկալվեց բանաստեղծուհի եւ ասմունքող Աննա Կոստանյանը, ով չքնաղ եւ անմոռաց երեկո պարզեց մասնակիցներին: Երեկոյան լսարանը լցրեց սեւեւային եւ սափա-

ղես եկան «Մենք արեւ ենք միասին» համադրությամբ, ներկայացրին փոքրիկ բեմադրություններ, ցուցադրեցին իրենց հմտությունները եւ կարողությունները: Ցերեկույթի ավարտին Այունիքի մարզպետ Վ.Հակոբյանը երախտագիտություն հայտնեց կրթօջախի մանկավարժներին եւ սաներին՝ բովանդակալից միջոցառում նախապատրաստելու եւ անցկացնելու համար: Իսկ ամենավերջում կրթօջախի սաներին հանձնվեցին նվերներ:

Միջոցառումից հետո համայնքի եւ մարզի ղեկավարները եղան մարզադահլիճում, ծանոթացան կրթահամալիրի այլ պայմաններին:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆՍԻ

նական տողերով:

Բոլորի անունից շնորհակալություն են հայտնում Աննային, ով իր տարեդարձի տորթը կիսեց մեր երիտասարդների հետ:

Հաջորդ երեկոյան երիտասարդներին հյուր էր եկել «2016թ. տարվա լավագույն նկարչուհի» ճանաչված, մեր համաքաղաքացի Արգինե Սահակյանը: Հյուրերն արեցին ամեն ինչ, որ երեկոն դարձնեն հաճելի, գեղեցիկ եւ անմոռաց: Ցուցադրվեց արվեստի պատերազմում նահատակված հերոս տղաների մասին պատմող «Սիսակյան ջոկատ» եւ «Պարուն են Արգինե Սահակյանի կտավները» ֆիլմերը: Այնուհետեւ կազմակերպեցին դիսկոտեկա՝ «պարուն են բիզնես-մենները» խորագրով: Բոլորիս հիշողության մեջ միշտ կմնան մեզ պարզեւած անչափ ուրախ եւ անկեղծ պահերը:

Վերջին օրն էլ ունեցանք հերթական անակնկալ հյուրը՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունից Արմինե Պետրոսյանը, ուն էլ խնդրեցինք մասնակիցներին հանձնել համապատասխան հավաստագրեր:

Ցավոք, ամեն լավ բան ունի վերջ: Իսկ ամեն ինչի վերջ մի նոր բանի սկիզբ է: Մասնակիցները բաժանվեցին՝ ակնկալելով հաջորդ անգամ կրկին հանդիպել նույն թիմով:

ՍՈՒՄԱՆԱ ՄԱՏԱՆԿՑՆԵՐ
«Խարիսխ» ՀԿ նախագահ

Փաստաբան Արշավիր Խալափյանի վերջնական արդարացումը, կարծեք, ուրվագծվում է

ՀՀ վճռաբեկ դատարանը 2016թ. հունիսի 24-ին ընդունած որոշմամբ բեկանել է Արշավիր Խալափյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով Այունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015թ. մայիսի 5-ի դատավճիռը ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015թ. օգոստոսի 4-ի որոշումը եւ գործն ուղարկել Այունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Հիշեցնենք, որ սույն պատմությունը սկսվել էր դեռեւս 2014թ. մայիս ամսին, երբ փաստաբան Արշավիր Խալափյանի հանդեպ քրեական հետապնդում սկսվեց Աշոտ Կույունջյանի եւ Սարմեն Սարգսյանի հարդորումների հիման վրա:



Այունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2015թ. մայիսի 15-ին կայացրել էր մեղադրական դատավճիռ, որի համաձայն Արշավիր Խալափյանը մի դրվագով մեղավոր էր ճանաչվել, մյուս դրվագով արդարացվել:

ՀՀ վերաքննիչ դատարանը 2015թ. օգոստոսի 4-ին մերժել է վերաքննիչ բողոքները եւ ուժի մեջ թողել Այունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը, որից հետո գործն ուղարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան (վճռաբեկ բողոքները կազմել էին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը եւ փաստաբան Արմինե Ֆանյանը):

Գործի մանրամասներին ծանոթանալու համար ներկայացնում ենք սույն քրեական գործի համարը՝ ՍԴ/0195/01/14:

«Այունյաց երկիր»



«Բիզնես կարողությունների զարգացում» թեմայով երկրորդ դասընթացը Սիսիանում

Այունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» ՀԿ-ի նախաձեռնությամբ Սիսիան քաղաքում նոյեմբերի 15-18-ը սեկնարկեց ՀՀ

սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Ապագան մերն է-2» ծրագրով նախատեսված «Բիզնես

մշակութային արժեք, որից 713 իր տեղակայված է մշտական ցուցադրությունում: Շուրջ 200 միջ հիմնականում գրքեր են, փաստաթղթեր, լուսանկարներ: Հոգաբարձությունը թանգարանում ներկայացնում է ավելի քան 120 առարկա: Պղնձե իրերի հավաքածուն մեծ է՝ 80 իր, որոնց ցուցադրությունը ձեւավորված է գեղեցիկ, Ձանգեզուր-Արցախին բնորոշ նախշերով:

Թանգարանի ֆոնդային նյութի, ինչպես նաեւ հիմնական ցուցադրության գորգերն ու մյուս գործվածքները՝ ձեռագործը, տարազն է այլև, թվով 115 են:

Ըստ գրքի հեղինակ Ծովինար

Պետրոսյանի «Գրավոր հիշատակարանների»՝ «Մեկ տառն ու բառն էլ, թանգարանային իրի վրա, մի աշխարհ է...»: Սիսիանի պատմության 17-րդ դարից նրանց ընդգրկող գրավոր իրերը 800 են: Դրանց մեջ է նաեւ Գրիգոր Տաթևացու քարոզագրի «Ձմերան» հատորը:

Անփոխարինելի արժեք է ներկայացնում 1886թ. հրատարակված Ելիզավետպոլի նահանգի Եթնիկ տեղագրության քարտեզը: Այն կազմել է Ե.Շահբազյանը: Նահանգն ունեցել է 258324 տեղաբնիկ հայ եւ թվով 10 ազգության ու ժողովրդի ներկայացուցիչներ, դրանք են՝ ռուսները,

գերմանացիները, թաթերը, քրդերը, հրեաները, կյուրդիցիները, հապոնալցիները, ուղիները եւ թաթարները:

Թանգարան հաճախումները մշտական դարձնելու նպատակով այստեղ միջոցառումների շքերթ է: 2000-ի մարտին՝ «Ադոնցյան օրերով» սկսվում է թանգարանի նոր ցուցադրաշրջանը: Հետաքրքիր է «Թանգարանային գիշեր» միջոցառումը, ամռանը՝ «Ձանգեզուրի գոյամարտը» միջոցառման շրջանակներում մեզ համար անհայտ մնացած հերոսի հայտնաբերումն է, իսկ երկրորդը մեր ուխտագնացությունն է՝ որեւէ ազգանվեր անհատի շիրի-

մին, պատմում է Ծովինար Պետրոսյանը: Դրանով ճանաչում ենք մեր երկրամասն ու հուշարձանները եւ համագործակցում հուշարձանների պահպանության տեղի կազմակերպության հետ: Մյուս միջոցառումը «Հացի տոն» է, որը նշվում է սեպտեմբերից հետո: Այստեղ կարելի է լսել «Մերուհների խաչմերուկը» եւ «Մշակույթը՝ պատվար» ծրագրերն ու միջոցառումները:

Այդ ամենն ընթանում է տարեկան 2500-4000 մարդու թանգարան եւ քարադարան այցելությամբ: «Թանգարանի աշխատակիցները կարելի էր են ամեն այցելուի, միջոցառման ամեն մասնակցի մուտքը

թանգարան, ձգտում, որ մշակույթը ոչ միայն ճիշտ ներկայացվի, այլև հաճելի հուշի վերածվի, նոր այցի ցանկություն արթնացնի»:

Այդ զգացումն ունեցա Սիսիանի Նիկողայոս Արոնցի անվան պատմության թանգարան 10-րդ այցիս ժամանակ:

Շնորհավոր հոբելյանը՝ քառորդարյա նվաճումի մշակույթի օջախ:

ԱՐՐՈՒՐ ԱՈՒՔԵՆՏՆԱՆ
Հայաստանի Ժուռնալիստների միության անդամ,
«Այունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ փնտրեն

Գինին ու գինեկոշիկը Գորիսում



ՍՈՒՐԵՆ ՎԱՐՊԱՆՅԱՆ

Ո՞ւմ հայտնի չէ, որ Գորիսն առանձնահատուկ կոլտրիստի և ավանդույթներով կարևոր քաղաք է: Կոլտրիստային մի սովորույթի մասին են ցանկանում պատմել, որը, իսկապես, ավելի գուժեղ ու հաճելի է դարձնում գորիսյան միջավայրը:

Եթե գորիսցիները հնուց թթի լավ այգիներ են ունեցել և օդի թորել, ապա խաղողի այգիներ՝ ոչ, չեն ունեցել, բացառությամբ Վարարակն գետի հարավային հոսանքի կիրճերում ծվարած փոքրատարածք այգեմասերի: Բայց գինի միշտ էլ պատրաստել են, կամ, ինչպես իրենք են ասում, գինի են քաշել: Քաղաքի բնակչության զգալի մասը, կարելի է ասել, ում ոտը բռնում էր, տնային պայմաններում գինի էր պատրաստում իր ներքին կարիքների համար: Հասարակության այն մասը, որը գինի չէր քաշում, մի տեսակ խեղճ էր, չեն ասում՝ նվաստացած: Ընդհակառակը, գինի ունեցողները հպարտ էին քաղաք դուրս գալիս եւ ձեռքառնելով արեւելյան առողջների ակտիվ գրուցակիցներ էին: Հիմա էլ նմանները շատ են:

Եթե Գորիսում խաղողը քիչ էր, ապա քաղաքի բնակիչները որտեղի՞ց էին այն ձեռք բերում:

Նախ մեր շրջանի տարածքով անցնող Որոտան եւ Զարբուխ լեռնային գետերի հովիտներում (Հալիծոր, Շինուհայր, Խոտ, Քարահունջ, Հարթաշեն, Խնձորեակ, Կոռնիծոր, Տեղ) որոշ քանակի խաղող էր արտադրվում, գորիսցիները դրանից էլ էին օգտվում: Սակայն հիմնականում խաղողի գնումներ անում էին Լեռնային Ղարաբաղից եւ Վայոց ձորի տարածաշրջանի գյուղերից: Այս խաղողները բարձր որակի էին՝ լավ գինի էր ստացվում, միաժամանակ օդի էին թորում:

Գինի պատրաստելը Գորիսում նման էր ձեռքով համար մթերք պահեստավորելուն՝ ասեղնք՝ մոթալ դեղին, դավուրմա պատրաստելուն եւ այլն: Գորիսցիները գինի չի պատրաստում վաճառելու համար, այլ, ինչպես իրենք են ասում, խմելու համար:

Այնուհանդերձ, կային որոշ գինի պատրաստողներ, ովքեր քաշած գինու մի մասը բաց վիճակում վաճառում էին: Իհարկե նրանք թիվը շատ փոքր էր, այնպես որ մատների վրա

կիաշվեիր, եւ քաղաքի խնողները նրանց տեղը լավ գիտեին:

Այս վերջին 30-40 տարիներին գորիսցիներն իրենց այգիներում մշակում են ցրտադիմացկուն մուսկատ տեսակի խաղող: Այն, իհարկե, բարձր որակ չունի, ցածր շաքարայնության է, յուրահատուկ հոտ ու համի, որը ոչ բոլորին է դուր գալիս, սակայն սրանից էլ հիմա գինի քաշողներ շատ կան: Հիմնականում ստացվում է թթվաշ, ցածր թնդության գինի: Սրա պատրաստման համար, հնուցված հետ միասին, ավելի շատ քանք ու հետետողակա-նություն է պահանջվում, հակառակ դեպքում, ինչպես մեր քաղաքացիներն են ասում, «զկաջուր» կատացվի եւ հնարավոր չի լինի խմել:

Գինի վայելում են հիմնականում ձմռանը: Բոլորովին չափազանց-րած չեն լինի, եթե ասեն, որ ձմեռվա լավ արեւային օրերին (նման օրեր Գորիսում միշտ էլ լինում են) պատերի անկյուններում, քաղաքի հրապարակներում, մարդաշատ այլ վայրերում հաճելիորեն արեւկող առողջների գրուցները կարելու թեմաներից մեկը գինին է լինում: Սկզբում յուրաքանչյուրը ներկայացնում է, թե որտեղից է խաղող բերել, ում հետ միասին, ինչքան, ինչ որակ է ունեցել այն, պատրաստման տեխնոլոգիայում ինչ նորություն է կիրառել եւ այլն: Ի դեպ, գրույցի այս մասը խաղաղ է անցնում: Սակայն, երբ բանը հասնում է գինին գնահատելուն, այստեղ գրույցը թեմանում է, յուրաքանչյուրը իր գինին է գովում, ապացույցներ ներկայացնում՝ վկայակոչելով քաղաքի՝ իր գինին խմած այս կամ այն նշանավոր պաշտոնավորին, լավ գինին ճանաչողին, երբեմն էլ՝ ճանաչված խնողներին եւ այլն:

Հիմա էլ Գորիսում կան լավ գինի խնողներ: Մի ժամանակ Գորիսի շուկայում բաց գինի էին վաճառում Հալիծորի, Շինուհայրի, Խոտի, Քարահունջի, Խնձորեակի, Կոռնիծորի կոլտնտեսությունները: Խնողները հաճախ շրջում էին շուկայում եւ գինի «համտես» անում: Պատմում են, որ քաղաքում հայտնի Բագրատ Գաբրիելյանը գինու որակը «փորձելու» նպատակով մի շնչով մեկ դույլ գինի է խմել եւ դատարկ ամանը վերադարձնելով վաճառողին՝ ասել՝ «Գինիդ լավն է երևում: Վաղը անպայման կգամ, մի անգամ էլ կփորձեն եւ տան համար կտանեն»: Բագրատ Գաբրիելյանն ինձ պատմել է, որ իր տանը գինի է կռվեցրել հայ հանձարեղ դերասան Հրաչյա Ներսիսյանի հետ:

Բառացի մեջ են բերում նրա ասածը. – «Տեսնելով փոքրամարմին, միհարավուն դերասանին՝ ասացի՝ սա ո՞վ է, որ ինձ հետ հավասար խմի (ինքն իրոք աժդահա էր): Ես վերցրի մեծ բաժակը, նրան տվի փոքրը: Մի դույլ գինի եւ մի դույլ էլ թթի օդի էինք դրել մեր սեղանին: Որոշ ժամանակ անց տեսա, որ էս գործը հեռուն գնացող է: Բաժակս փոքրացրի: Ինքը սկսած տեսնով շարունակում էր խմել: Մի որոշ ժամանակ հետո չիմացա ինչ եղավ, հաջորդ օրը արթնացա մեր բազմոցին: Կինս ասաց, որ ինձ տապալելուց

հետո Հրաչյան մի քանի բաժակ էլ մեծակ է խմել ու շնորհակալություն հայտնելով հանգիստ հեռացել:

Էդ մարդը յանձն բաժակ շարժող էր, ինձ պարան տվավ... »:

Լավ խմելու հետ մեկտեղ Բ.Գաբրիելյանը նաեւ ձիգ ուտող էր: Նա մորթել էր իր դանան (մեծ հորթը), որ հանձնի մսի խանութ՝ վաճառելու: Երբ դիմում է, գործակատարը նրան ասում է, որ հենց նոր մեծ քանակությամբ միս է ստացել, չի կարող վերցնել: Ստիպված կնոջը հանձնարարում է, որ միսը եփեն եւ դավուրմա անեն: Եփելուց հետո միսը լցնում են երկու մեծ աման, դնում թախտի մոտ՝ սառելու, որ հետո ոսկրերը հեռացնեն:

Կինը գնում է խանութ դավուրմայի համար կարագ բերելու, իսկ Բագրատը թախտին թիկն է տալիս: Երբ մսի հոտը քիթն է ընկնում, մի կտոր վերցնում է, որպեսզի փորձի, թե ինչպես է ոսկրահան լինում:

Կինը, ճանապարհին ծանոթների հանդիպելով, ոտը կախ է անում եւ գնումը կատարելուց հետո վերադառնալով տուն՝ տեսնում է ամաններում միայն ոսկրեր են մնացել: Այդ օրվանից Բագրատին կնքում են «Դանա ուտող Բագրատ» մականունով:

Հակառակորդի գինին թերագնահատվում էր՝ ընդհուպ դրա նվաստացնելը, վիրավորելը՝ անվանելով «զկաջուր», «արխի ճուր», «արխը լցնելու բան», «ըռխա երինգիլ», «քացախ» եւ այլն: Նման գրույց-վիճաբանությունները երբեմն ավարտվում էին գինի պատրաստողների մեկի տանը, որտեղ գինեհորը հրավերով ընկերներով գնում եւ գինի էին խմում՝ գնահատելու պատրվակով:

Լինում էր նաեւ այնպես, որ երբ վկայակոչում էին մեկի բարձր կարծիքը, ընդդիմադիր գինեգործն այսպես էր արձագանքում. «Արա՛, նա հինգա գուդում լավ գինին ո՞րն ա, էն արխի ճուրն էլ տաս կխմի «համ էլ փա-փա՛ կանի»»: Մեկ ուրիշն էլ կարոնացած հայացքով դիմացինին կասեր՝ «Ո՞ւմ գինուց ես է՛ խոսում: Են օրն ինձանա մի քանի լիտր գինի օգուժ տանի խառնի, որ կարա իրենը խմի»:

Մարդ էլ կա, որ ամեն տեսակի գինի էլ խմում է: Այդպիսի երկու հարգարժան ընկեր կա Գորիսում, մեր քաղաքացիները նրանց լավ գիտեն:

Գինու հարզը բարձր պահելու համար մարդիկ դիմում են ամենատարբեր միջոցների: Քիչ չեն այն գինի պատրաստողները, ովքեր իրենց տանն առատ սեղան են բացում՝ խորովածով, քյուֆթայով եւ հարզված այլ ուտեստներով, եւ հրավիրում քաղաքի հարզված ու հեղինակավոր մարդկանց գինի խմելու՝ ասել է թե՛ գինին գնահատելու:

Դե եկ ու այս պայմաններում գինում անկողմնակալ գնահատական տուր:

Դրանից հետո մի քանի օր քաղաքում այդ «անմահական» գինու մասին են պատմում, գինեգործն էլ հպարտ ու «համեստորեն» ինքնագոհ լսում է:

Անհատաբար եւ կրթոտ գինի կռվեցնողները քաղաքում քիչ չեն: Բայց նրանցից ոչ ոք չէր հասնի հայտնի սմիսչի Առաքելի որդուն՝ Գորիսում լայն ճանաչում ունեցող Ալբերտ Սահակյանին: Անհնար էր դիմակայել նրան կամ էլ դիմանալ նրա ճնշմանը: Դա մի ուրիշ բան էր, հատկապես, եթե հակառակորդը նրան չէր ճանաչում ու շարունակում էր վիճել: Միայն կողքից մայեիր՝ իսկական ներկայացում, այն էլ փափազանական մակարդակի: Ալբերտ Առաքելիչը՝ առատ կերուկուն կազմակերպողներից լինելով, ուներ նաեւ մի առանձնահատկություն: Այն համախոհը, ով կրթոտ գինեկոշի ժամանակ պաշտպանում էր նրա «շահը»,

հաջորդ օրն Ալբերտից հաստատվել էր ստանում մի չեթվեր գինի եւ վրան էլ 1-2 լիտր թթի օդի: Բա ի՞նչ եք կարծում, պատվի հարց էր:

Գորիսում ճանաչված գինի կռվեցնող էր ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող, վաստակաշատ մարզիչ, մեր տարածաշրջանի սպորտի պատմության տարեգիր, հարզված մանկավարժ Խերունց Իվանը (Իվանյան): Երիտասարդ տարիներից մինչեւ խոր ծերություն նա պատրաստել է գինի եւ օդի, ուներ լավ մառան: Սրա հետ միասին նա առանձնացնում էր գինի կռվեցնելու իր յուրօրինակ ձեռով: Ավելորդ է ասել, թե նա լավ կերուխում կազմակերպող էր՝ հիմնականում իր տանը: Բացառվում էր, դա անելու ամենափոքր առիթն անգամ նա բաց չէր թողնում: Հակառակը ոչ ոք չի կարող հիշել: Եթե մեկն ու մեկը փորձում էր նրան համոզել, որ այսինչ մարդու գինին նրա գինուն չի գիջում, անհապաղ մի երկու-երեք լիտր իր գինուց կառանձնացներ եւ կասեր՝ «Տար կռվեցրու (համենատիր), կտեսնես, որ իմ գինուն ոչ մի գինի չի հասնի»:

Բայց այս արվեստում Իվանյանի մոտ առանձնահատուկը եւս մեկ ուրիշ բան էր: Մեծ տարողություններից բացի նա գինին պահում էր նաեւ ապակյա շշերում, այսինքն՝ շշալցում էր անում: Դրանք հիմնականում մեկ լիտրանոց, հաստ պատերով ծանր շշեր էին՝ իմ սերնդի մարդիկ լավ են հիշում: Հարյուրավոր լցրած շշեր նա թաղում էր իր մառանում՝ հողի տակ, որոշ քանակի էլ պառեցրած պահում էր մառանի այս կամ այն անկյունում: Թաքստոցների տեղի, քանակի, պահվող գինու որակի մասին իրենից բացի ոչ ոք չգիտեր, իրավունք էլ չուներ իմանալու: Երբ հյուր էր ունենում տանը, հանում էր թաղած շշերից եւ հողոտ վիճակով բերում սեղանին, կամ էլ սեղանին էր դնում մանդիկներով փաթաթված շիշը:

Բնականաբար, ներկա գտնվողների մոտ առանց գինի վայելելու էլ բարձր տրամադրություն էր ստեղծվում, եւ դրական կարծիքն Իվանյանի գինու մասին պատրաստ էր: Չմայած արդեն շուրջ տասը տարի է՝ թավ բեղերով, ներկայանալի արտաքինով ու պարթեւ հասակի հարուստ կոլտրիստով այս այրը հրաժեշտ է տվել երկրային կյանքին, գորիսցիները հաստատ համոզված են, որ դեռեւս նրա մառանում թաղած գինի կա:

Գինի կռվեցնելու իր առանձնահատուկ ձեւն ուներ Գորիսում հայտնի գինեգործ, հարզված քաղաքացի ժողա Ասատրյանը: Նրա պատրաստած գինին բացի իր տնից ոչ մի տեղ չէր խմվում՝ արգելված էր այն դուրս տանելը: Սա չի նշանակում, թե նա մեծակ էր խմում: Այս գինին խմում էին Գորիսի հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչները՝ ունի հյուրընկալ օջախ:

Հիմա «գործը» շարունակում է որդին՝ Արամը, ով իր պատրաստած գինուց լցրած զավաթը դատարկելուց հետո, չպպացնելով լեզուն, ասում է.

«Տեսնաս ես գինին հուլա քաշալ» եւ ժպիտը դեմքին՝ խորհրդավոր նայում շուրջը: Պատմում են, որ հեթոթական անգամ ժ.Ասատրյանն ընկերներին հրավիրել է գինի խմելու: Որպեսզի ծրագիրը լիարժեք արած լինեն, որոշել են խմելով բացել կարպած երեսուն լիտրանոց կարասը: Բնականաբար, հրամայական էր մառանում մեկական գավաթ փորձելը: Փորձը «փորձանք» դարձավ: Նախ թողնեցրը, պանիրը, լավաշը, ապա տանը պատրաստած խորտիկները մաս-մաս եկան մառան, սուփրա բացվեց կարասի շուրջ: Երեկոյան արդեն կարասը դատարկ էր: Այդ օրվա արձագանքը մինչեւ հիմա էլ հնչում է քաղաքի ականջին:

Հատկանշական է, որ երբեմն էլ կարասի մոզական ուժն է գինուն գինի դարձնում: Ժ.Ասատրյանն արտահայտում էր թեւավոր այսպիսի մի միտք. «Ինչքան էլ վատը լինի գինին, եթե մտնի մեր կարասը, ընտիր գինի կդառնա»:

Իր կյանքի վերջին 20 տարին տաղանդաշատ Գուսան Աշոտը (Դադալյան) մշտապես բնակվել է ստեղծագործել է հայրենի Գորիսում:

Բոլորին հայտնի է, որ Գուսանը լայն շփումների մեջ էր մեր քաղաքի ողջ բնակչության հետ, այդ թվում նաեւ շրջանի ղեկավար աշխատողների:

Հաճախակի նա գալիս էր կուլտըրական ոչ թե անձնական որեւէ հարցով, այլ ուղղակի գրուցելու, հարցնելու, իր մոտ ստեղծած գործը ներկայացնելու կամ էլ դրա յուրօրինակ քննարկումն անելու եւ այլն: Քանի որ առիթը ներկայացավ, ասեն, որ հղանալով որեւէ ստեղծագործություն՝ լինեք դա երգի մեղեդին, թե խոսքը, դուրս էր գալիս քաղաք եւ սկսում ներկայացնել ժողովրդին: Հատկապես, արմուկը հեծած ուսուցչի հին տան պատուհանի գոգին, ձեռքի փնջ այտին՝ փողոցի մայրով անցնող-դարձողներին՝ լինեին նրանք մտավորական թե շինական, բանվոր թե գյուղացի, երիտասարդ թե ծեր, ով պատահեր, ճանման անձանքների կարգում էր բուսաստեղծությունը, երգում մեղեդին եւ կարծիք հարցնում:

Բնականաբար, լինում էին մարդիկ, ովքեր իրենց կարծիքը հայտնելու հետ անում էին նաեւ արժեքավոր առաջարկություններ: Դրանք մեծ գուսանն ու շաղրոթյամբ լսում էր եւ օգտագործում: Ահա այսպես՝ ժողովրդի հոգու եւ սրտի միջով նա հղկում էր յուրաքանչյուր գործ, որի համար էլ երգերը միշտ ջերմորեն են ընդունվել եւ ընդունվում: Սա Գուսանի ստեղծագործելու ձեւի առանձնահատկությունն էր, որը պետք է բոլորն իմանան, հատկապես մեր նորօրյա երգահանները:

Հայտնի բան է, որ գուսանները կին, սեր, հայրենիք, աշխատանք երգելու հետ նաեւ գինու գովքն են արել: Բացառություն չէր Գուսան Աշոտը:

Սակայն բացառություն էր այն, որ նա նաեւ լավ գինի պատրաստող էր ու կռվեցնող: Ամեն աշնան մեր միջնորդությամբ Կոռնիծորի կոլտնտեսության երջանկահիշատակ մախագահ Անդրանիկ Սրայայանը 350-400 կգ խաղող էր ուղարկում Գուսանին: Նա դրանից պատրաստում էր անմահական գինի: Երանի նրանց, ովքեր բախտ են ունեցել վայելել: Սա ասում են ամենայնայնուց: Գինի պատրաստելուց հետո Գուսանը գալիս էր շրջվում, շնորհակալություն հայտնում ու շաղրոթյամբ համար եւ միաժամանակ ասում, որ մի տո՛ղ գինի է առանձնացրել՝ պահում է մեզ հյուրասիրելու համար: Բնականաբար, հանգստացնելով նրան, ասում էինք, որ դրա կարիքը չկա: Բայց նա մնում էր իր կարծիքին եւ բազմից հիշեցնում այդ մասին:

1989թ. ձմռանը՝ իր մահկանացուն կնքելուց 5-6 օր առաջ, վերջապես նրան հաջողվել է կուլտըրական ղեկավար աշխատողների մի փոքր խմբի իր տուն հրավիրել: Գինին իսկապես անմահական էր, հանդիպումը՝ անսովորակ: Այդ օրը վերջին անգամ ձեռքն առավ անդավաճան քանանյան, իսկ նրա շնորհաշատ, սիրուհուհու տիկին Արաքսյան կատարեց Գուսանի հոգեզնայլ երգերը: Լիովին տեղին է հիշել մեծ թուամանյանի «Գինին հոսում էր գետի նման» պատկերավոր տողը:

Գինի էր վայելում նաեւ Գուսանը՝ շառագունել, գինեգույնի էին փոխվել նրա այտերը: Քանի որ երկար տարիներ նա սիրտ-թոքային անբավարարություն ուներ, մեծ նրան նախագուլաշարինք, որ գինին կարող



Տասն էլ մրցանակով վերադարձան

Հայաստանի քիթ-բոքսինգի ակումբների գավաթի խաղարկությանը Սյունիքի մարզի «Գարեգին Նժդեհ» ակումբը (մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան) մասնակցեց տասը մարզիկով: Մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում նոյեմբերի 11-13-ն անցկացված առաջնությանը մասնակցում էր մոտ 300 քիթ-բոքսիստ:

Գուցեզական մրցմանը կապանցիները հաջող հանդես եկան. ակումբի սաներից վեցը դարձավ հաղթող, չորսն արժանացավ արծաթե եւ բրոնզե մեդալների: Ակումբի սաներից չորսն առաջին անգամ էին մասնակցում նման պատասխանատու մրցման, նրանցից երկուսը՝ Արման Մնացականյանը եւ Ռուբեն Սարգսյանը, դարձան հաղթող, իսկ Ալեն Ավետիսյանը եւ Վախթանգ

Պետրոսյանը կանգնեցին պատվով պատվանդանի երկրորդ աստիճանին: Ինչպես նշեց ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանը, առաջին մրցամարտերում իր սաները փոքր-ինչ կաշկանդված էին, զգալ էր տալիս մրցափորձի պակասը, այս մրցաշրջանում որեւէ կարելու մրցման չէին մասնակցել (աշխարհի եւ Եվրոպայի գավաթային առաջնություններ, հանրապետության առաջնություն եւ գավաթ), բայց հետո հունի մեջ մտնելով՝ հասան ցանկալի արդյունքի:

Ակումբում սերնդափոխություն է կատարվում, իսկ մարզիկների մի մասն այսօր ծառայում է ազգային բանակում, որոշները՝ առաջնագծում: Ինչպես փոխանցեց ակումբի մարզիչը, դեկտեմբերին կայանալու է երկու միջազգային մրցաշար՝ Ուկրաինայում (հարկով) եւ Թբիլիսիում, որոնց մասնակցությունը հնարավոր կդառնա սրտացավ բարեարձեցիչ հովանավորության շնորհիվ: Մարզիչն ու սաները լիահույս են, որ այս անգամ եւս հովանավորներ կգտնվեն:

ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Ժորա Մանուցյանը 75 տարեկան է

«Գրիգոր Տաթևացի» հրատարակչությունը լույս է ընծայել Հիմուհայրի տարեգիր Ժորա Լեւոնի Մանուցյանի հեղինակած «Ծննդյան 75-ամյակի առթիվ» «Հուշապատում-ընտանեկան արեւածագից առաջ եւ հետո» (2016թ., 252 էջ) գիրքը:

գույց արել հայոց ազատամարտի չգերազանցված ռաիվիա, համագյուղացիներ Դավիթ-Բեկից մինչեւ ազատամարտի հնոց՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ, անկախ Հայաստանի ազատատենչ հերոս, երդվյալ նժդեհական Արշակ Հիլիմյան եւ պետական գործիչ Սուրեն Թովմասյան...

Գնահատելով ժորա Մանուցյանի գրահրատարակչական գործունեությունը, ընդառաջ ծննդյան 75-ամյակին՝ նրան նվիրեցինք հետևյալ բնութագիրը:

Հիմուհայրը նշանավոր մարդկանց պակաս չի զգացել: Փառք նրա նահատակ որդիներին եւ հերոսական աշխատավորներին: Որպես հրապարակագիր, տարեգիր եւ հայրենասեր քաղաքացի՝ հարազատ ուսումնի եւ համայն հայերի կյանքով, հոգսով ապրող սիրելի մտավորականն ապրում է ժամանակագրության առջեւ իր բաժին պատասխանատվությամբ: Ծնարտապատումն իր սերունդներին մեջ՝ չնչավակելով հնամյա հեռացած սայլի ճեղքը, նոր ժամանակներում ի մի բերեց հրապարակախոսական առերեսում պատմության հետ որպես համագիտակ մարդ:

Թերեւս Հիմուհայրից հասակ առած, ակադեմիական բարձունքները նվաճած, հանրահռչակ պրոֆեսորներ Հրաչիկ Սիմոնյանի, Լեւոն խուրչունյանի, Խիկար Բարսեղյանի, Արամ Սիմոնյանի, Եղվարդ Խուրչունյանի, Լեւոն Սիմոնյանի պատմագիտական աշխատությունների կողքին, Սյունյաց երկիրը Բարձրալի կամոք սիրահարի տեղ է թողել պատմության ուսուցիչ ժորա Մանուցյանի համար: Նրա հայրենագիտական գրքերն իր ուժերի ներածին չափով նվաճել են մարդկանց սրտերը: Հայրենի գյուղում նա ապրում է մեղվի նման արդար եւ աստղի նման գեղեցիկ: Ժորա Մանուցյանի «Հիմուհայր» բազմահատորյակը ներառել է Սյունյաց աշխարհի այս հատվածում՝ Որոտանի կիրճի եւ Գրչաձորի անմահ պատմությունը, նոր ժամանակների գյուղը վերափոխած Տաթևիկի շինարարության եւ համամիութենական նշանակության Հիմուհայրի ռեալիստ կոշիկների գործարանի գործարկման իրողությունների հանրահռչակմամբ՝ պահպանելով երկրի հիշողությունը եւ Հիմուհայրի պատմության ամենամեծ իրադարձությունների խորհուրդը: Ժորա Մանուցյանի բեղուն գրիչը ստանձնել է առեկի պատասխանատվություն, նոր սերնդին կողմնորոշող հզոր ոգի է կտակել, մատնա-

ժորա Մանուցյանի անխնայ աշխատասիրությունն օրեցօր բնագծեր է նվաճում ընդգրկելով այնպիսի սակավ բացահայտված հայրենագիտական եւ հայագիտական ուղորդներ, որոնք սկսվում են Որոտանի կիրճի անապատական հայրերից եւ գրչագիր մատյաններ ծաղկող միանձնուհի կույսերից...

Շնորհավորելով 75-ամյա հոբելյարին, մանավանդ նկատի ունենք, որ նրա գրիչը՝ հոգեպահուստի այդ ժամանակը եւ Հիմուհայրի մասին գրելու արտոնությունն ունի:
ԱՐԹՐՍ ԱՆԱԲԵԼՅԱՆ
«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ փնտրեն
ՀՀ Սյունիքի մարզի Հիմուհայր համայնքի պատվավոր քաղաքացի

Երգեր սիրո եւ աշխան

Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում անցկացվեց երաժշտական երեկո, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, Կապանի եւ Գորիսի հոգեւոր հովիվները, մտավորականներ, հյուրեր: Այս անգամ ոչ թե կոնկրետ անձ կամ կոլեկտիվ մեծարվեց, այլ մարդկային զգացմունքներից ամենամանավանդակն ու նվիրակները՝ սերը: Կապանի ճանաչված երգիչ-երգչուհիները հնչեցրին օրվա խորհրդին պատշաճոր երգեր ու մեղեդիներ, իսկ Էկրանին սահուն էին երեկոյի թեմաներով քննարկական տողեր, ինչն ամբողջանում էր միջոցառման խորագրի մեջ՝ «Ու նվիրումնի մեղեդի մնամ...»: Մեծադիր էկրանից Կապանում հայտնի անձինք, ովքեր այլեւս մեզ հետ չեն (Վաչե Եփրեմյան, Ռոբերտ Էջանյան) իրենց մոտեցումները եւ ընկալումները հայտնեցին սիրո հավերժության մասին:

ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցուցահանդես-մրցույթ մանկապարտեզում

Աշուն դեղնակարմիր, բազմերանգ գույները տեղափոխվել էին Կապանի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատության դահլիճ, որտեղ սեղաններին եւ պատուհաններին հարյուրից ավելի հետաքրքրական կոմպոզիցիաներ էին: Նախակրթարանում անցկացվեց «Աշնանային ֆանտազիա» խորագրով ցուցահանդես-մրցույթ:

Ներկայացված հարյուրից ավելի աշխատանքների ստեղծման համար օգտագործվել էին աշնանային բարիքները՝ մրգեր, բանջարաբուստանային մշակաբույսեր, վայրած պտուղներ, եղևուկ կոններ, ծղոտ, եղեգ: Կոմպոզիցիաները պատրաստել էին ծնողները՝ մանկապարտեզ հաճախող երեխայի հետ միասին (198 սան ունի նախակրթարանը): Առավոտվանից մարդիկ էին հաճախում ցուցահանդես եւ ծանոթանում ու մասնակցում քվեարկությանը: Արդյունքներն ամփոփելուց

հետո մանկապարտեզի տնօրեն Բելլա Կոստանյանը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր նպաստեցին ցուցահանդես-մրցույթի կայացմանը, եւ մասնավորապես այն միտքը հայտնեց, որ նման միջոցառումները նպաստում են մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանը, նաեւ մանկապարտեզ-ծնող կապի սերտացմանը: Բ.Կոստանյանը շնորհակալագրեր հանձնեց տարբեր խմբերի ծնողական խորհրդի նախագահներին եւ դաստիարակներին, պատվոգրեր՝ լավագույնները ճանաչված կոմպոզիցիաների հեղինակ ընտանիքներին, առանձին ցուցադրեցին լավագույնը ճանաչված երեք աշխատանքները: Նախակրթարանի տնօրենը նաեւ հայտնեց, որ այսուհետեւ նման ցուցահանդես-մրցույթ մանկապարտեզում կանցկացվի ամեն տարվա աշնան վերջին ամսվա սկզբին:

ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ

է խնդիրներ առաջացնել: Գուսանն այսպես արձագանքեց. «Չէ, չեմ խնամ, ուղղակի դնում եմ պրշխ»: Որոշ ժամանակ անց ակնհայտ էր, որ Գուսանն այստեղ գիտնի է խնամ: Երբ նորից հիշեցրինք նրան, այսպես պատասխանեց. «Ախր շտախ տալիս ա, հո՛ւնը չխմեմ»:

Ի՞նչ լավ էր, որ Գուսանն այդ օրն իր սրտի քեֆին չդիպավ, մեզ էլ պատվեց այդ անմոռանալի, բայց ցավալիորեն վերջին համդիպումով: Գինի կռվեցնելու գործում շրջանցել հայոց մեծ արձակագիր Սերո Խանգադյանին՝ ուղղակի հնարավոր չէր:

Սերոն գինի չէր քաշում (չգիտեմ, գուցե երեւանում ինչ-որ բան արել է), բայց փոխարենը հինգ մատի պես գիտեր Գորիսի բոլոր գինի պատրաստողներին եւ յուրաքանչյուրի տեղը դասակարգման մեջ:

Նման եզրակացության նա գալիս էր միայն գինին «փորձելով»:

Ավելորդ է ասել, որ Ս.Խանգադյանը ցանկացած գորիսեցու օջախում սպասված հյուր էր: Հեղինակավոր գինի «փորձողը» առանձնանում էր նաեւ նրանով, որ ոչ մեկի հրավերը չէր մերժում ու գինեկռվի սկիզբը հայտնի լինելով, անհայտ էր մնում դրա վերջը: Թունը մասնակիցների մի մասին ուղղակի տանում էին:

Անվանի գրողի 60-ամյակը 1975թ. մայրաքաղաքում նշելուց հետո մեծ շուքով տոնվել է նաեւ Գորիսում՝ նրա ծննդավայրում: Հանդիսավոր մասից հետո խնջույթի ճոխ սեղան էր պատրաստվել, որի կազմակերպումը հանձնարարված էր շրջկոմի աշխատողներ Արտուշ Հովսեփյանին, Աշոտ Գրիգորյանին եւ մեքենամեկիորատիվ կայանի պետ Ժորա Ասատրյանին: Ասում

էին, որ գինին բերելու են Արթուրյանի «Մադրասա» տեսակից: Այդ օրերին առատ ծյուն էր տեղացել եւ պատվիրված գինին ճանապարհների անանցանելիության պատճառով չէր ստացվել: Օգնության է հասել Ժ.Ասատրյան գինեգործի սահմաններ չճանաչող երեւակայությունը: Խանութներից գնելով տարբեր տեսակի գինիներ՝ նա փնջել է մի «Մադրասա», որի մասը երբեւէ չէր եղել: Երեկոյին գինին արժանացել է բոլորի հավանությանը եւ բարձր քննություն բռնել: Բանը հասել է նրան, որ միջոցառման հաջորդ օրը շրջկոմի առաջին քարտուղար, երջանակահիշատակ Արամ Հարությունյանը կանչել է Ա.Գրիգորյանին ու հարցրել, թե երեկվա «Մադրասայից» հնարավոր է մնացած լինի: Վերջինս պատասխանել է, որ ամբողջությամբ խմել են, բայց եթե

ինքն ուզում է, կարող է «բերել» տալ: Գորիսեցիները գինին կռվեցնում են նաեւ վաղ գարնանը: Այստեղ լայնորեն ընդունված է այդ օրերին խմբերով բանջար (եղինջ) ուտելու գնալը: Ընկերներով հիմնականում իջնում են քաղաքի հարավում գտնվող Գորիսի եւ Քարահունջի այգիները, որտեղ արեւկող մասերում բանջարն առաջինն է զլուխը հանում: Մի քանի ցողուն հավաքելուց հետո խորվածի կրակն է բորբոքվում, ու սկսվում է գինեկռիվը:

Կարելի է ասել, որ այստեղ միայն անունն է «բանջար ուտել», իրականում ընկերներով ակտիվ զբոսանք եւ ուրախ ժամանց են անցկացնում եւ կերուխում անում: Քաղաքում շրջանառվող է նաեւ այսպիսի մի արտահայտություն, որը եւս ընդգծում է հարգանքը գինու նկատմամբ: Երբ մեկին հարցնում

են, թե որտեղ էր, հաճախ պատասխանում է, որ գնացել էր այսինչի տուն՝ գինի խմելու, չէր ասի՝ ուտել-խմելու:

Գորիսում համբավավոր գինի քաշողներ էին Ժորա Ասատրյանը, Իվան Խերունցը (Իվանյան), Սամսոն Միրաքյանը, Գուրգեն Հարությունյանը (ծագումով Հիմուհայրից), Նկարիչ Սեդրակը (Գրիգորյան), Հայկ Տատինցյանը, Չոնիկ Միրաքյանը, Արտավազդ Յոլյանը, ատամնաբույժ Բակոն (Միրոնյան), Սանամի Գուրգենը (Գրիգորյան), Ալբերտ Սահակյանը, Լենո Բակունցը եւ ուրիշներ:

Ամփոփելով ասենք, որ գինի քաշելու եւ գինեկռվի գործում բարձր համբավ ձեռք բերելու համար պարտադիր է վճռորոշ պայման է մնում լավ եւ առատ հյուրասիրությունը, այլապես բան չի ստացվի:

Ծանոթացան լրագրության հիմունքներին

«Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոնը հասարակական կազմակերպության նախաձեռնած է ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ֆինանսավորած ծրագիրը «Այունիքի մարզի երիտասարդների մեղի գիտելիքների զարգացում» խորագիրը եր կրում, որին մասնակցել են 15-ական երիտասարդներ Կապանից («Ծիածան» ԱԿԿ) հասարակական կազմակերպություն, Քաջարանից (N1 հիմնական դպրոց), Մեղրուց («Մեղրու կամանգ ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպություն):

Չորսամսյա դասընթացներին եւ

գործնական աշխատանքներին զուգընթաց ծրագրի մասնակիցները պատրաստել են տեսանյութեր՝ օդի աղտոտվածությանը, աղբահանությանը, բնապահպանությանը, ազատ ժամանցը կազմակերպելուն եւ այլ օրախնդիր հարցերին առնչվող: Տեսանյութերի պատրաստմանը եւ թողարկմանը նրանք հաղորդակից եղան «Սոսի» հեռուստատեսությունում: Երիտասարդների պատրաստած որոշ տեսանյութեր այնուհետեւ հեռարձակվեցին հեռուստատեսության «Լուրեր» լրատվականի ընթացքում: Ծրագրի շրջանակում երիտասարդներն այցելեցին Երեւան, հանդիպումներ եղան մայրաքաղաքային տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակում:

Ծրագրի ամփոփիչ միջոցառումը տեղի ունեցավ Կապանի N2 ավագ դպրոցի դահլիճում, որտեղ Կապանի, Մեղրու եւ Քաջարանի թիմերը հանդես եկան ողջունի խոսքով, նաեւ ներկայացրին ծրագրի շրջանակում իրենց կատարածը: Ոմանք էլ, ինչպես նշեցին իրենց ելույթում, կողմնորոշվեցին մասնագիտության ընտրության խնդրում: «Որոշ դժվարությունների հանդիպեցինք, քանզի Կապանի շրջանակից դուրս եկանք՝ ծրագրի մեջ ընդգրկվելով նաեւ Քաջարանի եւ Մեղրու դպրոցականներին, բայց, երբ ամեն ինչ հետեւում է, համոզված եմ՝ ճիշտ ճանապարհ ընտրեցինք», - միջոցառման ավարտին ասաց «Ծիածան» ԱԿԿ հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Մարտիրոսյանը, ով ծրագրին աջակցած գործընկեր կազմակերպություններին եւ մասնակից երիտասարդներին հանձնեց հավաստագրեր եւ շնորհակալագրեր:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Նորոգվել է Սերո Խանգաղյանի տուն-թանգարանը

Գորիս քաղաքի իշխող բարձունքներից մեկի վրա է կառուցվել հայ մեծանուն արձակագիր Սերո Խանգաղյանի տունը: Նրա մահից հետո տունը հետաքրքիր «ոդիսական» է ունեցել, եւ երկարատեւ աշխատանքներից հետո Գորիսի քաղաքապետարանին հասողվել է վերջնականապես լուծել տան պատկանելության հարցը: 2015թ. հոկտեմբերից սկսել է իրականանալ գորիսցիների երազանքը. ունենալ գրողին ու նրա գրական ժառանգությանը հարիր տուն-թանգարան:

Տուն-թանգարանի նորոգման համար ներ է դրվել 69 միլիոն դրամ: Վերանորոգման աշխատանքներն իրականացրել է «Չարսնաձոր» ՍՊ ընկերությունը: Ամբողջովին հիմնանորոգման է ենթարկվել շինության ներսը, տունն ունի սանհագույց, ապահովված է ջրամատակարարմամբ, նաեւ գազիֆիկացվել է: Նորոգվել եւ ամրացվել են այգու պատերը, դարպասները, շենքի տանիքը եւ այլն: Շինարարական աշխատանքներ են իրականացվել նաեւ շենքի շրջակայքում ու նկուղային հարկում: Այդ ամենն արժանի է գովասանքի: Սակայն ասել, թե բոլոր հարցերը հիմնովին լուծվել են, սխալ կլինի. դեռեւս անելիքներ կան տուն-թանգարանի նկուղային հարկի որոշ հատվածներում եւ շրջակայքում: Սերո Խանգաղյանի տուն-թանգարանից, ինչպես ակիդ մեջ, երևում է Գորիս քաղաքը՝ իր բոլոր փողոցներով ու թաղամասերով: Այսինքն, տուն-թանգարանից քո առջեւ բացվում է անկրկնելի, դյուբիչ մի աշխարհ, որին չես կարող հարեւան-

ցիրեն նայել: Այն անընդհատ ձգում է քեզ, ստիպում երկար մնալ այդտեղ եւ վայելել Գորիսի հեքիաթային գեղեցկությունն ու վեհությունը: Գորիսի կառավարությունը այս տարվա հունիսի 9-ի նիստում հավանության է արժանացրել Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ 2016թ. փետրվարի 23-ին ստորագրած 55 միլիոն դոլարի վարկային պայմանագիրը, որով զբոսաշրջային եւ մշակութային ենթակառուցվածքների բարեկարգում է նախատեսվում: Գումար կհատկացվի նաեւ Գորիսի հանրային ենթակառուցվածքների, շենքերի ծակատային հատվածների, հանրային տարածքների, շենքերի տանիքների, թանգարանների, ճանապարհների, լուսավորության վերականգնման եւ այլ գործերի համար: Ասել է թե՛ Սերո Խանգաղյանի տուն-թանգարանի շրջակայքի բոլոր հատվածների բարեկարգումը հնարավոր կլինի իրականություն դարձնել, քանզի բխում է զբոսաշրջությունը տարածաշրջանում խթանելու պահանջից: Տուն-թանգարանում հիմա դատարկություն է: Սկս ինչու թանգարանի աշխատակցուհի Արմանուշ Բակունցը կոչ է անում բոլորին՝ ովքեր ունեն գրողի անձնական իրերից, ձեռագրերից, տեսանյութեր ու ձայնագրություններ, նվիրեն թանգարանին՝ դրանով իսկ իրենց նպաստը բերելով տուն-թանգարանի ձեւավորմանն ու կահավորմանը: Թանգարանն աշխատում է երկուշաբթիից շաբաթ, ժամը 11-17-ը: Թանգարանի բացման հանդիսավոր արարողություն դեռ չի կազմակերպվել: Հուսանք, որ այն յոթ սարի հետեւում չէ:

ՎԱՎԱՐԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հասարակայնության ծանուցում
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03թ. N217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Սյունիքի մարզի Բալաք համայնքի վարչական տարածքում ջրարեփացման նպատակով՝ «Ուրագ» կոչվող բնական աղբյուրից՝ 0.61 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:
Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):
Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2016թ. դեկտեմբերի 16-ին ժամը 16:00-ին՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:
ՀՀ բնապահպանության նախարարություն

ՎԱՅՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Սյունիքի մարզի «Սալվարդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կառավարման մարմինը՝ խորհուրդը, տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարում է մրցույթ:
Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝ ՀՀ քաղաքացիությունը, բարձրագույն կրթությունը, ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի ամուցով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,

ՎԱՅՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կառավարության 2010թ-ի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) մասին» կարգի վեցերորդ կետ:
ՀՀ Սյունիքի մարզի «Աճառանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:
Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝ ՀՀ քաղաքացիությունը, բարձրագույն կրթությունը, ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի ամուցով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,

ՎԱՅՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղամուշի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի (11-12-րդ) եւ դասվարի (10-11-րդ) թափուր տեղերի համար:
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.
1. Հանձնաժողովի ամուցով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծել 1),
2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրությունը,

Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԿԱՐԳ»
ՍՅՈՒՆՅԱՑԻ ՊՆԱՍՏԱՆԱԿՈՒԹՅԱՄԸ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝
ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրահոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակով (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
Շմալվալ՝ 2 տպագրական մամուլ: Տպագրական՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 08.12.2016թ.: